

ԱՄԵՐԻԿԱ

Հայաստան

Պաշտօնաթերթ ՌԱՄԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

ԱՅՅԻՍ 3, 2026

Ժ. Տարի, թիւ 18 (473) (Նոր Շրջան), Հիմնում 1899-ին, իբրև «Չայն Հայրենեաց»


ԱՅՍ ԹԻՒՎ ԿԱՐԴԱԼ՝

Կեանքը ոչ թե ունենայն է, այլ հասկանալը	էջ 2
ԱՅՆՈՒՐԱՅԻ ՉԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐԸ ԽԱՅՏԱՅԻՆ	էջ 3
Պատմական չքմարտությունը Հայկական Հարցի Մասին	էջ 4
ԼԻԲԵՐԱԼ-ԻՍՐԱԵԼԻ ԵՐԿՐՈՐԳ ԾՈՐՉԸ	էջ 5
ՅԱՂԹԱՆԱԿԻ ՍՈՒՐՈՒԹԻՒՆԸ	էջ 7
ՈԳԵԿՈՂՈՒՄ ՎԱՅՆ ԹԵՔԵՆՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐՄԱՆԵՆ ԵՐՍՍ	էջ 8
ՅԻՇՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԸ «ՓՈՔՐԻԿ ԶՐԵՏԱԿԵՐԸ» ԳՊՐՈՅՈՒՄ	էջ 8
ՀԱՅԿԱԶՆԵՆ ՀԱՍՏԱՍՐԱՆԸ ԿՈԳԵԿՈՂԷ...	էջ 9
ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՊԵՐՃ ՉԱԼԱՅՃԵԱՆ	էջ 10

«ԵԿՈՒՐ, ՊԱՐԷ» ԵՐԵՒԱՆԻ ՄՐՏԻՆ ՎՐԱՅ ՇՈՒՐՋՊԱՐ...

գոնե յուշել կու տայ սովետի աշխատանքներու (պրովետարներու) օրը

Մայիս 1-ին, Համաշխարհային պարի օրուան առթիւ, Երեւանի մէջ կազմակերպուեցաւ բացառիկ ձեռնարկ մը: Այսպէս, մայրաքաղաքի արտին՝ Հանրապետութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ մեծ շուրջպար մը: «Եկուր, պարե» կարգախօսով կազմակերպուած շուրջպարը բոլորի անմիջական



ուշադրութեան արժանացաւ՝ համախմբելով հոծ թիւով երիտասարդներ եւ պարի սիրահարներ, որոնց շուրջպարով ստեղծուեցաւ բացառիկ պատկեր մը: Բաց աստի, Ազատութեան հրապարակին վրայ ալ, Օփերայի շէնքի յարձակում տարածքին տեղի ունեցան նոյնպէս խանդավառ ու բազմամարդ ձեռնարկներ՝ Համաշխարհային պարի օրուան առթիւ:

ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ԿԱՏԱՐՈՒԹՅԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

28 Ապրիլի երեկոյեան, վերանորոգման աշխատանքները ետք, Փարիզի մէջ մեծ շուրջով եւ պաշտօնապէս կատարուեցաւ Հայաստանի Հանրապետու-



թեան դեսպանատան նոր նստավայրին բացումը: Հանդիսատիս արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Ֆրանսայի եւ Հայաստանի Արտաքին գործոց նախարարները՝ Ժան-Նոէլ Պառօ եւ Արարատ Միրզոյեան:

Միջոցառումը տեղի ունեցաւ դեսպանատան ընդարձակ պարտէզին մէջ՝ ներկայութեամբ բազմաթիւ քաղաքական անձնատրուիներու, ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներու եւ ստուարաթիւ հիւրերու:

(Շար.ը տեսնել էջ 12)

ՆԻԻ ԵՆՐԲԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԸՆԴՎԶԵՅՈՒՅԱԾ Է ԹՈՒՐԲԵՐՆ ՈՒ ԱԶԵՐԻՆԵՐԸ

Նիւ Եորքի նորընտիր քաղաքապետ Ջոն Բրան Մամտանի Ապրիլ 24-ին «X»-ի իր էջին վրայ հրապարակած է հետեւեալ ուղերձը, որ խոր վրդովում յառաջացուցած է քրքրական աշխարհին եւ Պաքուի մէջ: Այս հրապարակումին արձագանգող լուրերուն տակի մեկնաբանութիւններուն մէջ՝ կրակ ժայթքող թուրքերէն շատեր կ'ըսեն. «Ամտեղի ուրախացանք, որ մահմետական մը գրաւեց Նիւ Եորքի նման քաղաքի մը ղեկավարի պաշտօնը: Ահա՛ ձեզի արդիւնքը: ... Թուրքին միակ բարեկամը թուրքն է...»:



ՌԱԿ ՀԱՍՏԱԳՐՈՒԹՅՈՒՄ ՄԱՍՈՒԼ

Հայաստանի Ազգային Ժողովի Ընտրութիւններուն Ընդամենը

Հայ Ժողովուրդին Անսպասելի Պաշտօնները

Աստուծոյ Ուրախ Բաժնէ Ըլլալու Նոր Իշխանութիւնները

ՌԱԿՍ. ԱՐՇԱԽԻՐ ԿԵՕՆՏԵԱՆ

Պետական բարձրագոյն՝

Member of the Order of Canada Շքանշանակիր

Հազիւ թէ քանի մը շաբաթներ մնացած են մինչեւ Յունիսի 7-ը ուր տեղի պիտի ունենան Հայաստանի Ազգային Ժողովի համապետական ընտրութիւնները: Անգամ մը եւս կը յիշեցնենք թէ մեծ չափով այս ընտրութիւններու արդիւնքէն կախեալ է յառաջիկայ երկար տարիներուն համար, թէ՛ մեր հայրենիքին եւ թէ՛ հայաստանաբնակ ինչպէս նաեւ Սփիւռքի հայութեան ազգային ճակատագիրը:



Սակայն հակառակ այս անգամուան ընտրութեանց անկիւնադարձային կարեւորութեան, որոշ յուսախաբուութեամբ է որ կը հետեւինք Հայաստանի մէջ ընտրարշաւի այս օրերուն, ընտրուելու հաւակնութիւն ունեցող որոշ հոսանքներուն գործելակերպին, խօսելակերպին եւ խոստումներուն մէջ դրսեւորուած լրջութեան եւ յստակութեան պակասին կամ տկարութեան: Յատկապէս, նուազագոյնը նայարմար է ներկայ վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ իր որոշ գործակիցներուն «ընտրապտոյտներուն» ընթացքին, կրկնակի տարբեր ուսեստեղծներ ճաշակելով, կամ հրապարակներու վրայ թմբուկ նուագելով ժողովրդականութիւն շահելու փորձերը...

Նախորդ մեր յօդուածով արժարձեցինք անվիճելի կարեւորութիւն ունեցող հարցերէն մէկը հանդիսացող Հայաստան-Սփիւռք փոխադարձ յարաբերութեանց յստակացումը: Եզրակացուցինք թէ Սփիւռքը իր առաւելութիւններով եւ տկարութիւններով հանդերձ անբաժանելի եւ իրարասու բանկազին մէկ մասնիկն է Հայ ժողովուրդին: Հետեւաբար՝ անկախաբար Հայաստանի օրուան իշխանութեանց եւ յատկապէս յետընտրութեանց նոր իշխանութիւններուն նախասիրութիւններէն, այս վերջինները պարտաւոր են Սփիւռքին հետ վարուիլ այնպէս ինչպէս պարտաւոր են վարուիլ Հայ ժողովուրդի որեւէ մէկ ուրիշ հարազատ հատուածին հետ: Չենք զարմանար թէ իշխանութիւնները աճապարած չեն հակազդելու այս դժուար վիճելի եւ կառուցողական առաջարկին:

Այս անգամ, մեր այս յօդուածին նպատակն է բնորոշել գիտակից որեւէ հայու՝ նորընտրելի իշխանութիւններուն ուղղուած անսպասելի միտք պահանջները, որպէսզի Յունիսի 7-ին քուէատուփին մօտեցող քաղաքացին արդարօրէն որոշէ իր քուէին արժանի խմբաւորումը:

Պահանջ 1: Այո՛, խաղաղութիւն պէտք է տիրէ Հայաստանի տարածքին վրայ:

Առաջնահերթ է այս պահանջը որեւէ երկրի՝ մանաւանդ Հայաստանի համար: Կարեւոր է սակայն մատնանշել թէ ներկայ եւ շուտով շրջանաւարտ իշխանութիւններուն հիմնական սխալը այն է թէ անոնք կ'ուզեն համոզել, թէ պէտք է այս պահանջը լրացնել մեկնելով բազմադարեան մեր թշնամիներուն նկատմամբ ամբողջական զինաքափութեան դիրքերէն, այսինքն «ի զին ամեն զիջողութեան»: Բացայայտօրէն անտրամաբանական եւ ազգաբանդ է այս «մաֆիայի գոհի» դասական օրինակը հանդիսացող կեցուածքը, ուր այս վերջինը ի վերջոյ ամբողջովին անձնատուր եւ անգոր զերին կը դառնայ զինք յօշոտող անյազ մաֆիայեանին: Այդպէս ալ է այսօր, *անյազօրէն պահանջող* Ատրպէյճանին եւ յարեթօրէն տեղի տուող Հայաստանին փոխյարաբերութիւններուն անընդունելի վիճակը...:

Ակնյայտ իրականութիւնը այն է, թէ Հայաստանին առտու-գիշեր «ժտաղաղութեան համաձայնագիր» ստորագրելու ջանքերուն, Ատրպէյճանը ոչ իսկ դոյզն դրական պատասխան տուած է մինչեւ այսօր:

Ընդհակառակը, ան իր տարբեր խօսափողներով չի դադրիր համարձակիլ Սեւանը եւ Երեւանը Արեւմտեան Ատրպէյճան որակելէ: Իսկ անցեալ Օգոստոս 8-ի՝ առանց որեւէ երաշխիքի Ուաշինկթընեան Թրամփի այլեւս հանրաձայն քաղաքական ներկայացման համագործակցութեամբ «Համաձայնագիրը», կը շարունակէ մնալ ճիշդ այդ մակարդակին վրայ:

Նորընտրուող իշխանութիւններէն կը պահանջուի հետապնդել եւ իրականացնել իսկական արդար եւ արժանապատիւ, երաշխիքներով եւ ինքնապաշտպանութեամբ ապահովուած, տեսական խաղաղութեամբ Հայաստանը օժտելու լուրջ աշխատանքը:

Պահանջ 2: Հայաստանի ներքին կեանքին մէջ պարտի հաստատուիլ միջազգային մակարդակով մարդու խօսքի եւ իրաւունքներու ազատութեան, եւ ռազմակարգական սկզբունքներու բժախնդիր գործադրութեան անվիճելի դրութիւնը:

Ուր տարիներ առաջ երբ թաշտայ յեղափոխութիւն անուան տակ ձեռակերպուեցան այսօրուան իշխանութիւնները, անոնք ժամանակի մը համար վայելեցին համաժողովրդային համակրանք, որովհետեւ անոնք Հայաստանի ժողովուրդին կը խոստանային ճիշդ այդ սկզբունքները բժախնդրօրէն գործադրել: Այսօր ուր տարիներ ետք կացութիւնը ոչ թէ միայն վերադարձած է նախորդ շրջանին տեղի ունեցող կարգ մը այլաճակատութեանց, այլ նաեւ ատելի՛ն հիմա Հայ ժողովուրդի


(Շար.ը տեսնել էջ 11)

ԿԵԱՆՔԸ ՈՉ ԹԷ ՌԻՆԵՆԱԼՆ Է, ԱՅԼ ՀԱՍԿԱՆԱԼՐ, ՈՐ ԱՄԷՆ ԻՆՉ ԺԱՄԱՆԱԿԱԽՈՐ Է

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳՂ, փրոֆեսոր

Տարիների ու կենսափորձի հետ հասունանում ես, յաճախ էլ փիլիսոփայում: Լինում է, յաջողում է: Որոշ ժամանակ յետոյ կարողում եմ, Նոյնիսկ հաւանում, որ ասելիք կայ, անկեղծ, ապրումս ու բիրեղացած ասելիք: Սակայն մեր օրերում կեանքը շատ առաջ փոխում է, մտքերն էլ շուտ են հասունանում: Մեր օրերում կեանքը նաեւ վերածուել է մշտական ցուցադրության, իսկ մարդը՝ այդ ցուցադրության լուռ հանդիսատեսը: Սակայն կայ մի կործանարար մոլորություն, որը թունաւորում է մեր ներքին անդրորը. մենք համեմատում ենք մեր սեփական «քուլիսները» ուրիշների թուացեալ «բեմի» հետ: Սա հոգեւոր անձնասպանութիւն է եւ անհրաժեշտութիւն կայ վերագտնելու մեր սեփական արժէքը: Ցաւօք,- ասում էր ուրուկուայցի արձակագիր, «լատինաամերիկեան ճախակողմեան գրական ուղղութեան հսկայ» եւ «համաշխարհային ֆութպոլի ամենանշանաւոր գրագէտ» Էտուարսո Կալէանոն,-մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ յուղարկաւորութիւնն անելի կարելի է, քան մահացածը, որտեղ հարսանիքն անելի կարելի է, քան սերը, որտեղ արտաքինն անելի կարելի է, քան խելքը: Մենք ապրում ենք փաթեթաւորման մշակոյթում, որը արհամարհում է բովանդակութիւնը...



Սակայն յստակ է, որ ով անցեալ ունի չի կարող յիշողութիւն չունենալ: Դա է պատճառը, որ տարիների ընթացքում մենք անելի զգոյշ ենք դառնում մեր ներքին տարածքը մարդկանցով լցնելու հարցում: Այլեւ չենք ցանկանում թանկարժէք տարածքը զբաղեցնել սիրոյ անլուրջ զգացմունքների գաւաթով, անցեալում ապրած բարեկամների ճարճքում յարաբերութիւնով, իրենց սեփական ամօքի վկանե-

րով, այլ ոչ թէ քաջութեան: Ոչ մի անելողութիւն: Մենք զնահատում ենք ներկայի մաքրութիւնն ու պարզութիւնը, չենք կարելորում մարդկանց քանակը: Չենք ձգտում զարմացնել կամ մախանձեցնել որեւէ մէկին: Չենք մայում որեւէ մէկի պատկանելիութեան մանրութի անկիւնը: Չենք կարելորում ոչ մի հարցի պատասխանը եւ չենք սպասում սպասելիքներ: Սպասել մի բանի, որ այդքան էլ պարզ չէ, որ կը պատահի...

Կեանքը բացատրութիւններով չէ: Այն՝ հանդիպումներով, կորուստներով, լռութիւններով ու այնպիսի պահերով է, որոնք դու սկզբում չես կարողանում, բայց յետոյ ամբողջ կեանքում փորձում ես հասկանալ: Մարդ ծնում է կարծելով, թէ ամէն ինչ կարող է պահել՝ մարդկանց, պահերը, զգացումները: Բայց ժամանակը դանդաղ ու աննկատ սովորեցնում է հակառակը. ամէն ինչ շարժում է, փոխում, հեռանում: Ու հենց այդ փոփոխութեան մէջ է թաքնուած կեանքի խոր իմաստը: Մենք սիրում ենք հաւատալ, որ որոշ մարդիկ մերն են յաւերժ: Բայց շատ մարդիկ մնան եւ *առգատոյի*. երկար ժամանակ հասած չեն, մէկ էլ՝ հոպ ու փտած են: Բայց կեանքը ցոյց է տալիս՝ «յաւերժ»-ը յաճախ միայն զգացում է, ոչ իրականութիւն: Եւ հենց այստեղ է սկսում ցաւը՝ ոչ թէ կորուստից, այլ սպասումից, որ ինչ-որ բան պէտք է մնար այնպէս, ինչպէս կար: Մարդը սովորում է լռութեամբ ապրել իր ներսի աղմուկը: Սովորում է ժպտալ՝ երբ հոգին ծանր է, եւ խօսել՝ երբ ներսում խօսք չկայ: Բայց այդ ամէնը ոչ թէ կեղծիք է, այլ գոյատեւման ձեւ՝ մի աշխարհում, որտեղ ոչինչ չի մնում անփոփոխ: Եւ որքան էլ անցնենք ցաւի միջով, մի բան մնում է հաստատ. այն, ինչ իսկապէս զգացել ենք, երբեք չի անհետանում: Այն դառնում է մեր ներսի լռութիւնը, մեր հայեացքի խորութիւնը, մեր մարդկային լինելու չափը:

Գուցէ կեանքը հենց դա է՝ ոչ թէ ունենալը, այլ հասկանալը, որ ամէն ինչ ժամանակաւոր է, բայց զգացածը՝ յաւերժ հետք է թողնում մեր մէջ: Կեանքը երբեք չի հարցնի՝ արդեօ՞ք պատրաստ էիր: Այն պարզապէս կը տայ իր ճանապարհը՝ իր լռութեամբ ապրել իր կորուստներով, իր հագուարդէպ լուսաւոր պահերով: Միգուցէ դու չկարողանաս պահել այն ամէնը, ինչ սիրել ես: Միգուցէ չհասցնես ասել բոլոր խօսքերը, որոնք մնացել են ներսում: Բայց եթէ գոնէ մէկ անգամ ապրել ես այնպէս, որ սիրտդ ամբողջութեամբ զգացել է՝ ուրեմն ապրել ես իրականում: Չեն մնալու ոչ ժամանակը, ոչ մարդիկ: Մնալու է միայն այն, ինչ դու դարձել ես այդ ամէնի միջով անցնելով: Եւ գուցէ կեանքի ամենախորը իմաստը հենց սա է՝ ոչ թէ խուսափել ցաւից, այլ ապրել այնքան անկեղծ, որ նոյնիսկ ցաւը դառնայ ապացոյց, որ դու իսկապէս սիրել ես: Եւ եթէ մարդ մի օր լռութեան մէջ կանգնի ու փորձի հասկանալ իր ապրածը, գուցէ հասկանայ ամենակարեւորը՝ ոչ թէ ինչ է կորցրել, այլ ինչքան խորն է կարողացել զգալ: Հայրենիքը եւ սերը նրա նկատմամբ նոյնիսկ երբ է ընկալում:

Ճափոնացի գրող, թարգմանիչ Հարութի Մուրազամիճ իրաւացի է, երբ շեշտում է, որ ինչքան էլ ջանաս, երբ ցաւ կայ, ցաւում է: Սակայն իմ սիրելի ժողովուրդ, հայրենակիցներ, իմ սիրելի ծանօթ եւ անծանօթ բարեկամներ, իմ թանկարժէք հայ մարդ ու Հայաստանի քաղաքացիներ. Երբեք պէտք չէ ընկճուել. չպարտուած, չսխալուած պետութիւններ ու ազգեր չկան: Մենք տաղանդաւոր, ուժեղ, աշխատասէր, ինքնաբաւ, ձեռներեց, հերոս ժողովուրդ ենք: Մենք՝ անելի խորը անդունդներից ենք վեր բարձրացել ու հազարամեակների տառապանք հատելով, քայլել ենք առաջ, շուկել ենք մեր ուսերը ու ապրել ենք արժանապատուօրէն: Հիմա էլ նոյն վերելքն ենք ապրելու, եթէ զգանք իրար, ձեռք մեկնենք մէկս մէկու ու միասին բարձրանանք: Ես Չեզանով հպարտանում եմ, իրաքանչիւրով՝ հիանում, եւ երբ ետ եմ մայում, հասկանում եմ, որ այն դաւաճանութիւնն էր, ինչի միջով մենք անցանք, կարող էր իսպառ ոչնչացնել մեզ,

կարող էր կտրել մեր մէջքը, սակայն մեր ժողովրդի իմաստուն վարքն ու ապրածի փորձը առիթ են տալիս մեզ՝ նորից ոտքի ելնելու:

Մենք՝ մեր կեանքում ոչ մի ազգի ներկայացուցչի չենք զիջում: Անհատական մրցակցութեան մէջ կը յաղթենք բոլորին, հրեայ լինի թէ չին, ռուս լինի թէ թուրք, եւրոպացի լինի թէ ամերիկացի: Սակայն հաւաքական դաշտում է, որ պարտուում ենք, ապաւինում օտարին, հաւատում հեքիաթների: Հիմա եկել է ստախօսներից ազատուելու ժամը: Ես չզիտեմ, թէ յունիսի 7-ին ում էք ընտրելու, բայց ընտրութեան գնալն անհրաժեշտ է եւ առաջին քայլը որ պիտի անէք՝ անմիջապէս աղբարկղ նետէք անելողներին, խառնակիչներին, դաւաճաններին, երկերեսանիներին, որովհետեւ, միայն այս դէպքում է, որ ընտրութիւններն իմաստ կ'ունենան, որովհետեւ այս տեսակի մարդիկ են մարմնաւորում մեր վատթարագոյն յատկանիշներն ու մեր անկումը, մեր պարտութիւնն ու ինքնախարագանումը, մեր մասնատումն ու երկպառակութիւնը, որովհետեւ նրանք մենակ չեն գալիս իշխանութեան: Տալ Միւնիօքը, Տաւո՞շը, Սեւա՞նն ու դառնալ քաղաք պետութիւն: Հակառակ դէպքում սա է մեր ապագան այստեակ գեհեմի հետ: Մենք այնքան շատ ենք կորցրել, որ եկել է վերջակէտ դնելու, վերադառնալու, ինքներս մեր շուրջ ժողովուրդու, իրար սիրելու ու բարձրացնելու ժամանակը: Ժամանակակից աշխարհը թուամորթներին չի սիրում: Այնպէս որ, թուամորթներից ազատուելու ժամն է եկել: Ես հաւատում եմ մեր հոգու եւ ոգու հանճարին: Ես տեսնում եմ վեր բարձրանալու ճանապարհը, սակայն առաջին քայլը՝ պարտութեան վերջերից ապաքինուելն է, որ խուսափենք զնչուանալու ու անհետանալու վտանգից:

Մի կարելոր հանգամանք էլ կայ: Պէտք է միշտ յիշենք, որ Օսմանեան կայսրութեան վերջին տասնամեակների քաղաքական ճգնաժամը եւ Եւրոպայում տարածուած սոցիալ-տարրիմիզմի ու ռասայական տեսութիւնները դարձան հայ ժողովրդի դէմ ծրագրաւորուած ցեղասպանութեան գաղափարական հիմք: Երիտթուրքական շարժման խոստացած ազատութիւնները փոխուեցին ազգայնական ու բացառող քաղաքականութեամբ, իսկ փանթուրքական ու ժիհատական կոչերը ապահովեցին զանգուածային աջակցութիւն բռնութիւններին: Ի հարկէ, ես հասկանում եմ, որ ծովից ծով Հայաստանը ամէն մի հայի երազանքն է, իսկ ինչ ենք անում դրան հասնելու համար՝ ոչ մի բան: Մնում ենք միայն երազանքի յոյսին, դէ հա՛ «ամէն հայ աշխարհի տէրն ա» երգելով ենք մեր ծովից ծով Հայաստանին հասնելու: Բայց դէ այնքան միասնիտ ու բզկտըւած ենք, որ մեր երազանքը ուրիշներն ի շահ իրենց են օգտագործում. երբ իրենց պէտք ենք՝ յիշեցնում են մեր երազանքը, դէմ տալիս ու թողնում, որ մենք Ցեղասպանուենք, յետոյ էլ «փրկողի» դիմակով գալիս են մեզ «փրկելու»: Այնինչ, եթէ մենք ուզում ենք մեր երազանքին հասնենք, պէտք է մախ հզօրանանք: Ոչ թէ թեթեամիտի մնան արա-նրա խելքին ընկնելով կորցնենք այն, ինչ ունենք, որովհետեւ դա էլ ուրիշների երազանքն է՝ մեզ մեր պատմութեան հետ վերացնելու երազանքը:

Պէտք է այսօր անելի քան զգօն լինենք, հասկանանք, որ հենց սա է այսօրայ իրականութիւնը. կամ մենք կը կառուցենք ուժեղ պետութիւն ու կը լինենք կանգուն, կամ էլ կը շարունակենք երազել եւ ուրիշների համար կը մնանք առեւտրի անմիտ երազկոտը՝ որ վերջում թողնեն մէկ հայ, որպէս թանգարանային մնուլ՝ սրբապատկեր....

12.05.2026, Երեւան

Յ.Գ. Յօդուածը պատրաստ էր, սակայն ապրիլի 25-ին Երեւանի կեդրոնում կազմակերպուած խորոված-փարթին ցաւ պատճառէ: Յիշեցի. երբ Շեքսփի-րի հերոս Համլետն ասում է. «Մեռելաճաշի կերակուրները պաղ մատուցուեցին հարսնաստեղանի հրապիրեալներին», նրա ընկեր Երոբացիոն, պատասխանում է՝ «Այո տէր, շատ արագ յաջողուեցին մէկը միւսին»: Այսօր, հայոց նահատակների հոգեհանգստի օրը, այլասերուածները մեռելաճաշի կերակուրներով խնջոյք են անում: Կենդանին չի կարող զգալ այն, ինչ զգում է յիշողութեան ու ցաւի զգացումով օժտուած մարդ արարածը: Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի յաջող իսկ օրը Երեւանում աղմկոտ բաքոսատօն կազմակերպելը, վայ թէ, թուրքական պատուէր էր՝ աննախադէպ յարձակում հայոց յիշողութեան, արժանապատուութեան, արժէքների, պետականութեան եւ առհասարակ հայկականութեան դէմ: Հայաստանում վտանգուած է հայկական ամէն ինչ: Նրանք, ովքեր դա չեն հասկանում, ոչ միայն քաղաքականապէս տհաս են, այլեւ հոգեպէս թուամորթ: Մեզ բոլորիս ծանր ժամանակներ են սպասում: 2026 թուականը կարող է դառնալ ճակատագրական:

Բայց եւ՝ «Թէ Աստուած մեզ հետ է, ո՞վ կարող է լինել մեր դէմ» ...:

Խմբագրութեան համակարգող՝	Գոկոտ. Արշակիր Կեօնճեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Սիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ Անտիբեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուս)
Զաւէն Գրիգորեան	(Լթէսթ)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc.	
755 Mt. Auburn Street	
Watertown, MA 02472 U.S.A.	
Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com	
Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ԱՅՆԹՈՒՐԱՅԻ ՆԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՎՈԳԻՆԵՐԸ ԽԱՅՏԱՑԻՆ ԽՈՒՆԿԻ ԲՈՅՐՈՎ ՈՒ ԱՂՕԹՔԻ ՄՐՄՈՒՆՋՈՎ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՊԱՅՏԻԿ ԳԱԼԱՅՈՒՆՆԵՐ

Անցնող 111 տարին, մեր ժողովուրդը ցրուած աշխարհով մէկ որպէս պարարտ սերմեր, գոյատեւած է առ այսօր: Ոչ թէ լռութեան մէջ, այլ յիշողութեան: Ոչ թէ յուսահատութեան մէջ, այլ հաւատքի:

Մենք մեր անցեալը կրած ենք ոչ թէ որպէս բեռ, այլ որպէս բոցավառ կրակ՝ պահպանուած սերունդներու ընդմէջէն, փոխանցուած դողացող ձեռքերէն կայուն ձեռքերուն՝ յուսատրեղով պայքարի ուղին, որ չի մարիր:

Հայրենիքի թէ՛ Սփիւռքի տարածքին գտնուող հայու հոգու պարտքն է ամէն տարի ապրիլի 24-ը ոգեկոչել յատուր պատշաճի: Այս սուրբ օրը մենք չենք խոնարհիլ պատմութեան ծանրութեան առջեւ, այլ կը բարձրանանք անոր հետ, նորոգելով մեր ուխտը՝ այնտեղ փնտռելու արդարութիւն, ուր ընդմիշտ մերժուած է, հաստատելու ճշմարտութիւնը, ուր ընդմիշտ լռեցուած է, պահանջելու ճանաչում, ուր դեռուս պահուած է: Եւ քանի դեռ յիշողութիւնը կ'ապրի մեր մէջ, այնպէս ինչպէս մեր կամքը՝ անասան, անբաժան, անվերջ:

Լիբանանահայ պետական երեսփոխանուհի Փոլա Եագուպեան այս տարի հայոց ցեղասպանութեան 111-ամեակը ոգեկոչելու հրաւեր յղեց Այնթորայի Սէն Ժովէֆ քոլէճի շրջափակին մէջ գտնուող հայ որբուկներուն շիրմաքարերուն եւ անոնց յիշատակը յատեցանող յուշակոթողին մօտ, օրհնութեամբ Ռաֆայէլ-Պետրոս Մինասեան ԻԱ. Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց:

Սոյն ոգեկոչման երեկոյթը իրենց ներկայութեամբ պատուած էին Հայաստանի Հանրապետութեան Լիբանանի մօտ դեսպան՝ Սարմէն Պաղտասարեանն ու ազնուափայլ տիկինը, պետական երեսփոխան Նասամաթ Ֆրեմն ու նախարար Ռիշար Գոյումճեանը, ինչպէս նաեւ ազգային ականաւոր գործիչներու ներկայութեամբ, որոնք Խորին յարգանքով եւ մեծ պատուով կանգնած էին հայկական խաչքարին առջեւ իրենց յարգանքի տուրքը մատուցելու յատկապէս ցեղասպանութենէն մազապարծ հայ որբուկներու հոգիներուն:



Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ «Պայքար» շաբաթաթերթի խմբագիրներէն Պայծիկ Գալայճեան: Ան ողջունել էր նորին Վեսնտիին Պատրիարք հօր եւ պետական այրերու ներկայութիւնը, յայտնեց, թէ «Մենք յատկապէս այս վայրը ընտրած ենք ոգեկոչելու Հայոց ցեղասպանութեան 111-րդ տարեկիցը, այն խոր նպատակով, որ այս, թերեւ, Լիբանանի միակ վայրն է, ուր ճեմալ փաշայի հրամանով հայ որբերը փրկուած ցեղասպանութեան սարսափներէն ողջ ժամանած են հոս: Այստեղ անոնք ապրած են, տառապած, եւ մեծաւ մասամբ նահատակուած ու թաղուած այս հողի ընդերքին:

Այնուհետեւ, Պայծիկ Գալայճեան հրաւիրեց Հայ Կաթողիկէ Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարքը, որպէսզի իր առաջնորդող աղօթքով միանաբար կարենանք մեր աղաչանքը մատուցել Աստուծոյ 300 հայ որբ նահատակներու հոգիներուն համար: Օրհնութեան ու խնկարկութեան արարողութենէն ետք, իր խորհրդաւոր պատգամը փոխանցեց Ռաֆայէլ Պետրոս Պատրիարքը:

«Կը խոնարհիմ Հայոց Ցեղասպանութեան Նահատակներուն յուշակոթողին առջեւ՝ սրտաղդող խոր ցաւով ու դառնութեամբ:

Կը խոնարհիմ եւ աչքերս լեցուն կարօտի ու սիրոյ արցունքով, գոր ջարդարար մարդասպանը չի հասկնար՝ իր կատարած տակալի ոճիրով հանդերձ:

Կը խոնարհիմ հպարտանքով եւ արժանապատուութեամբ այն անմեղներուն ու մանուկներուն առջեւ, որոնք իրենց մահով՝ մեզի շնորհեցին ազատութեան եւ արժանապատուութեան բոլորը, հաստատակամութեամբ ու դիմադրութեամբ՝ յանուն խաղաղութեան:

Այդ անմեղներն ու մանուկները, որոնք զոհուեցան, մեզի նոր կեանք եւ նոր սկիզբ մը պարգեւեցին՝ լեցուն յառաջիմութեամբ ու բարգաւաճումով:

Այսօր, մենք կը քաղենք պտուղը 1915-ի Հայասպանութեան գողգոթային, որ խլեց հայ ժողովուրդի միլիոնաւոր զաւակներուն կեանքը:

1915-ի Ցեղասպանութեան ոգեկոչումը, այսօր, դաս մըն է բոլոր անոնց համար, որոնք կ'ենթարկուին այսպիսի դառնադառն փորձառութեան, որպէսզի գործեն միայն խաղաղութեան եւ արդարութեան ի խնդիր:

Սակայն, այն միաժամանակ կը խթանէ ու կը պողպատէ ազատ եւ արժանապատի կեանքին ձգտող իւրաքանչիւր ժողովուրդին ոգին ու կամքը:

Ինչպէս երէկ, այսօր ալ պատմութիւնը կը կրկնուի, բայց բարի ոյժերը կը յաղթեն չարին եւ անոր գործակիցներուն:

Մի՛ յուսահատիր եւ մի՛ կոտորեր սիրտդ, ո՛վ արի ժողովուրդ, որովհետեւ խաղաղութեան դրօշակակիրներն այսօր կը պատուեն քեզ ու կը սմանին քեզի:

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր անոնց, յատկապէս պետութիւններու ներկայացուցիչներուն եւ իրենց դեսպաններուն, որոնք, այս նուիրական երեկոյին, մեզ պատուեցին իրենց մասնակցութեամբ այս սուրբ վայրին մէջ, եւ որոնք տակալին ջերմնաւնդօրէն կ'աշխատին արդարութիւն ու խաղաղութիւն հաստատել մեր սուրբ հողին վրայ՝ մեր Հայրենիք Լիբանանի հողին վրայ:

Աստուած օրհնէ ձեր ջանքերն ու արդիւնաբեր ձեր քայլերը:

Ուստի, կը վերադառնամ ներկայ իրավիճակին մեր Հայրենիքին՝ Լիբանանի մէջ, խնդրելով, որ բոլորս մնանք միասնական, միաշունչ՝ չարին ու չարագործներուն դիմադրող, ինչպէս ալ որպէս մէկ միակամ ընտանիք՝ մնանք կառչած եւ համերաշխ մեր նախագահին, մեր պետութեան, մեր կառավարութեան ու մեր բանակին հետ:

Այսպէս, թող Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին օրհնութիւնը հանգչի՝ մեր Հայրենիքին՝ Լիբանանի եւ անոր սիրելի ժողովուրդին վրայ: Յատերժական հանգի՛ստ մեր բոլոր նահատակներուն: Ամէն»:



Այս խորհրդաւոր մթնոլորտին մէջ օրուան հանդիսավար Պայծիկ Գալայճեան իր ելոյթին ընդմէջէն յայտնեց, թէ մեր որբերը այս վայրին մէջ ապրած օրերուն գրկուած էին նոյնիսկ ամենապարզ մխիթարութենէն՝ հայկական օրօրօրացիներէն, ուստի հրաւիրեց լիբանանահայ տաղանդաւոր պարմանուհի Նայիրի Առնէլեանը, որ տուտուկի վրայ նուագէ «Օրօր»ը, յարգելու համար անոնց յիշատակը գէթ երաժշտութեան միջոցով. ապա «Տէ Բաման»-ը ջութակի վրայ հիանալի կերպով նուագեց Սելա Սուվաքճեանը: Իսկ ներկաները այս մեղեդիները ունկնդրեցին խորհրդաւոր լռութեան մէջ, ինչպէս երկար ժամանակ թաքցուած շշուկներ, եւ աղօթք բարձրացուցին անոնց հոգիներուն համար:

Մեր երախտագիտական ու գնահատանքի իւրայատուկ խօսքը կը փոխանցենք պատմաբան Շարլ Հայէքին, որ ամենայն մանրամասնութեամբ ներկայացուց Գեմալ փաշայի հրահանգներուն գոհ՝ հայ որբերուն ունեցած դաժան կեանքին մասին, թէ ինչպիսի պատիժներու կ'ենթարկուէին անոնք երբ հայեւրէն խօսէին: Ան յատուկ քաղաքականութիւն մը որդեգրած էր թրքացներու համար հայ որբերը, իսկ ըմբոստացողները կ'ենթարկուէին ահաւոր «ֆալաքա»ներու: 1993-ին, երբ Այնթորայի Սէն Ժովէֆ քոլէճը նոր դասարաններ աւելցնելու նպատակով շինարարական աշխատանքներ կը կատարէ եկեղեցիին կից տարածքին վրայ, ի յայտ կու գան աճիւններ, որոնք նահատակ հայ որբերուն կը պատկանէին: Վարժարանին պատասխանատու կղերականները հայ որբուկներուն մատուցներէն բաժին մը կը տեղադրեն իրենց բարձրաստիճան հայրերու գերեզմանատան մէկ անկիւնը: 2010 թուականին, որբուկներուն աճիւնները իրենց յալիտենական հանգիստը կը գտնեն իրենց մատուցող տարիքին վայել ու գեղեցկօրէն երբեքանգ ծաղիկներով յարդարուած դամբարաններու մէջ:



Մեպտեմբեր 2010-ին Լիբանանի Այնթորայի Սէն Ժովէֆ Քոլէճին մէջ, տեղի կ'ունենայ հայ որբուկներու գերեզմանի յուշակոթողի բացումը: Այնթորայի որբանոցին մէջ մահացած հայ որբերու աճիւնները ի վերջոյ կ'ամփոփուին պատշաճ կերպով եւ անոնց յիշատակը յատերժանող յուշակոթողը կ'ամրացուի: Խաչքարի պատրաստութիւնը եղած է Չաւեն Կոչտոյեանի յղացումով, իսկ քանդակը պատրաստուած է արուեստագետ Բաֆֆի Թոքաթեանի ձեռամբ: Յուշակոթողէն քիչ մը անդին, քոլէճի գերեզմանոցին մէջ, հայ որբերու տապանաքարին վրայ արձանագրուած է՝ «Աստ հանգչի՛ն հայ որբուկներ»:

Պատմաբանը անդրադարձ կատարեց նաեւ Գառնիկ Բանեանի «Մնաս բարով Անթորա» վէպին, ուր որբանոցային ահաւոր պայմաններուն մասին մանրամասնեալ տեղեկութիւն կարելի է իմանալ: Իսկ որպէս եզրակացութիւն՝ ան հպարտութեամբ յայտնեց, թէ իրենց քոլէճի կրթական ծրագրին անբաժան մասնիկ կը նկատուի ամէն տարի ապրիլ 24-ին հայոց ցեղասպանութեան պատմութիւնը եւ այս շիրմաքարերուն մէջ թաղուած հայ որբերուն ապրած ողբերգութիւնը, որպէս գիտութիւն փոխանցել իրենց աշակերտներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՓԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՌԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐՔԵՐ ԵՐԵԱՆԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԸՇՎԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՓԻ ՄԱՍԻՆ

(Շարունակում նախորդ թիվին)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՆՈՒԱՐԳ ՄՏՏՈՅՄԱՆ-ՏԱՐԱԳՃՄԱՆ

Բ. Փանթրյանիզմ—Նուաճողական քաղաքականություն

Փանթրյանիզմի գաղափարախոսությունը կը ձևավորվի 20-րդ դարում, որում նշանաբանն էր՝ նուաճել Անդրկովկասի, Միջին Ասիոյ, Հիւսիսային Կովկասի, Դրինի եւ Մերձ -Առգեան շրջանները, նպատակ ունենալով միատրեյտի թրքական կայսրութեան գերիշխանութեան տակ: Այդ ծրագիրը իրագործելու ճանապարհը վրայ գլխաւոր խոչընդոտներէն մէկը կը հանդիսանար հայ ժողովուրդը: 1908-ի յեղափոխութենէն ետք, Փանթրյանիզմը կը դառնայ Երիտթուրքերու պաշտօնական գաղափարախոսությունը: Քրիստոնէայ ազգաբնակչութեան բռնի թրքացումը դարձաւ Երիտթուրքերու գլխաւոր զենքերէն մէկը:

Հայերու իրաւագրկութիւնը եւ թուրքերու արտօնեալ վիճակը ինքնին կը ժխտէր ոչ-թուրք ժողովուրդներու ազգային ինքնորոշման իրաւունքը: Արտօնեալ կրօնին եւ ազգութեան չպատկանողը իրաւունք չունէր զենք կրելու որպէս ստորադաս խաւ: Անհերքելի իրողութիւն է, որ թուրքիոյ իրաւական սիստեմը իր էութեամբ եղած է ծայրաստիճան անարդար հայերու նկատմամբ: Այդպիսով թուրքիան իրաւական անհաւասարութիւնը կը ծառայէր Փան-իսլամիզմի քաղաքականութեան: Թրքական բռնապետութիւնը իր գոյութեան ապահովութիւնը կը տեսնէր ժողովուրդներու ազգային ազատագրական շարժումները խեղդելու, հպատակներու ձուլման եւ ստրկացման մէջ:

Հետեւեալը, Օսմանեան թուրքիոյ տիրապետութեան տակ հեծող հայութեան թշուառ եւ անմխիթար կացութիւնը, դարաւոր ճնշումն ու կեղեքումը, քաղաքական իրաւագործի վիճակը, հայ ժողովուրդը կը մղէր պայքարելու յանուն ազատութեան եւ արդարութեան: Այլ խօսքով, պէտք է ըսել՝ թէ նախորդ դարերու հայկական ընդվզումներուն եւ բախումներուն դրոյսապատճառը թրքական բռնակալ տիրապետութիւնն էր: Այդ մասին կ'անդրադառնայ Օսման Նուրիի հետեւեալ վկայութիւնը:—

«1890-ական թուականներէն Ապտիլ Համիտի նախաձեռնութեամբ կ'ազմուեցան «Համիտի» անկանոն զօրագումները, որոնց գլխաւոր նպատակն էր հալածել ու կոտորել հայ բնակչութիւնը: Քաղաքական եւ զինուորական իշխանութիւններու հրահանգներով այդ գումները կը յարձակէին գիւղերու վրայ: Գիւղերը կ'այրէին, ժողովուրդը կը կոտորէին»:

Օսմանեան կայսրութիւնը այս ծրագիրը իրագործելու համար, Համաշխարհային Առաջին Պատերազմը պատեհ առիթ մը կը հանդիսանար Ռուսաստանի եւ Պալքանեան երկիրներու հետ իրենց ունեցած դարաւոր հաշիւները մարտելու: Թուրքերուն նպատակն էր Ռուսերուն դէմ հանել ցարական կայսրութեան իրենց ցեղակից մահմետական ժողովուրդները, զանոնք ներգրաւելու համար թուրքիոյ գլխաւորութեամբ ստեղծուելիք «Մեծ Թուրքի» մէջ:

Ահա թէ ինչ նպատակներ կը հետապնդէին թուրքերը, երբ կ'անխաւաճառեալ ծրագիրով ուզեցին իրագործել հայ ժողովուրդին բնաջնջումը, ի սպառ վերացումը, ջարդով ու կոտորածով, բրտօրէն արմատախիլ ընելով իրենց հայրենի հողերէն: Այս մասին կը վկայէ Մելան Չատէ Ռիֆաթի հետեւեալ փաստարկը, —«Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութիւնը որոշում կայացուց մէկ մարդ կենդանի չթողնելու պայմանով սպաննել ու ոչնչացնել հայերը»: Այս հրամանը իրականացնելու համար, նախահաւուրիւնը ստեղծեց Յանձնաժողով մը՝ Պէհաւտտի Շաքիր, Դոկտ. Նազըմ եւ հանրակրթական նախարար Շիքրի պէյերը, զայն անուանելով «Երեքի Գործադիր Կոմիտէ»:

Գ. Պատմութեան Խեղափոխման Քաղաքականութիւն

Պատերազմի արարտին թուրք կառավարութիւնը ձեւակաւորեցին կը դատէ Երիտթուրքերու ղեկավարները: Գատավարութիւնը մեծ երետոյք էր, հայ ժողովուրդի նկատմամբ տեղի ունեցած հալածանքներն ու Տեղասպանութիւնը համայն մարդկութեան առաջ բացալայտելու տեսակէտէն: Սակայն կասկած կ'ուզէ՞, թէ թուրքիոյ կ'ազմակերպած ընդհանուր հետապնդումը իթի-հատական ղեկավարներու դէմ, ոչ այնքան զանոնք պատժելու համար էր, որքան Եւրոպայի խաբելու ձեւ մը: Պարզապէս Հայոց Տեղասպանութեան գնահատութիւնը կատարելու փորձ մը դիւրաբեկ կեղծիքով: Երբ Պոլսոյ Ամբաստանիչ Ատեանի ամբաստանագրին մէջ կը յիշուի, թէ այդ աղէտներուն ենթարկուած են «հայերուն կարեւոր մասը», եւ թուրքերուն «մեծամասնութիւնը»:

Այսպիսի անհեթեթ ու միամիտ պատճառաբանութեան կրնան հաւատալ Հայկական Հարցին անտեղեակ ու անգիտակ մարդիկ: Ահա թէ ինչու զարմանալի չի թուիր, երբ թուրքերը կը փորձեն գրչակներ կաշառել թրքանպաստ յօդուածներով խեղափոխելու հայոց պատմութիւնը: Եւ ինչու թուրքիոյ կառավարութիւնը յամառօրէն դեռ կը ժխտէ Հայոց Տեղասպանութիւնը:

Դ. Մշակութային Արժէքներու ոչնչացման քաղաքականութիւն

Տեղասպանութեան ուրիշ ձեւ մըն է ազգին մշակութային արժէքներու ոչնչացումը: Այն ինչ կը միտի վերացնելու հայութեան հետքերը այդ տարածաշրջաններէն: Ըստ Միջազգային պաշտօնական տեղեկատուութեան փաստերուն, հայկական Եղեռնի տարիներուն Արեւմտեան Հայաստանի տարածքին թալանուած ու հրկիզուած են մեծ թիւով վանքեր ու եկեղեցիներ: Ինքնաբոյսի հրապարակած տուեալներով ոչնչացուած են փլատակներու վերածուած են հայկական պատմամշակութային յուշարձանները: Այս փաստերու ուղղութեամբ Եւրոխորհուրդի 1987-ին ընդունուած որոշումին համաձայն, թուրքիայէն կը պահանջուի բարարել հայկական պատմական ճարտարապետական յուշարձաններու պահպանումը: Իսկ թուրք պետութիւնը արդարանալով կը յիշեցնէ, թէ թուրքիոյ մէջ հայկական մշակութային

որելէ արժէք դիտարեալ կերպով չէ ոչնչացուած, եւ պետութիւնը ի վիճակի չէ հոգալ բոլորին պահպանութեան հարցերը: Իսկ Ատրպէյճանցիները յարձակողական ռազմական միջոցներու դիմելով 18-19-դարերուն գոյատեւած Պարսի հայկական գերեզմանոցը աներելով տապանաքարերը օգտագործեցին սանդուխներու շինարարութեան համար: Եւ այսպէս կարելի է երկար թուել: Եւ այս գործելակերպը մինչեւ այսօր դեռ կը շարունակուի Արցախի մէջ:

Բայց կայ անհերքելի իրողութիւն մը, թէ անոնք որքան ալ փորձեն խեղափոխել հայոց պատմութիւնը չեն կրնար վերացնել պատմական փաստերու լուր վկանները, որոնք աշխարհին կ'ապացուցեն, թէ հայոց պատմական կոթողները հազարամեակներու պատմութիւն ունին, եւ այդ տարածքները եղած են հայ ժողովուրդին բնօրրանը:

Թուրքերը թէն յաջողեցան իրենց հետապնդած ծրագիրներուն մէջ, սակայն չկրցան ընկճել դարերու տառապանքին ու արհաւիրքին մէջ թրծուած ու ոգեղինացած հայու հոգին՝ որ իր յարատեւութեամբ յաղթեց մահուան:

Այսօր աշխարհը կը վերափոխուի: Պատմութիւնը կ'անցնի նոր հանգրուաններէ: Նոր հանգոյցներու առջեւ ազգեր ու ժողովուրդներ կը լքուին ու կը յանձնուին բախտին ու ճակատագրին: Կը կրկնուին անցեալի դէպքերն ու իրադարձութիւնները: Հին ու նոր դարերու մէջ հազարազիտ են քաղաքական պետական ղեկավարներ, որոնք հետեւած են պատմութեան դասերուն, պատմութեան կանչին կամ թելադրանքին:

Թուրքիան թերեւս օր մը գիտակցի, թէ ուրացումի քաղաքականութիւնը, որով դեռ կը յամառի սնանիլ թուրք հոգեբանութիւնը, անըմբռնելի, անհեթեթ ու անօթալի հակում մըն է: Թէ անիմաստ է իր քաղաքական գործիչներուն ցոյց տուած անտարբերութիւնը, որոնք տակալին կը շարունակեն ժխտումի իրենց քաղաքականութիւնը, յանկերգելով հայերու անհաւատարմութիւնը: Երբ այդ մասին պատմական անցեալի գէթ համառօտ ակնարկ մը իսկ բաւական է հաստատելու, թէ պետութեան բոլոր ազգերուն մէջ ամէնէն վստահելիներէն եղած են հայերը, որոնք որպէս ճարտարագործ ու մտացի ժողովուրդ իրենց կարեւոր ներդրումը ունեցած են մշակոյթի տարբեր բնագաւառներու մէջ:

Ի վերջոյ չմոռնանք, թուրքերը որքան ալ փորձեն եղծանել պատմական եղելութիւնը, պատմութիւնը չի դադրիր ճշմարտութիւն ըլլալէ: Պատմութիւնն է, որ առանց եղծանումի չափանիշերու կ'արձանագրէ յեղաշրջուող ժամանակներու կատարուած ահաւոր իրողութիւններուն եւ արարքներու ոգին՝ տիրող իրականութեան իսկութիւնը: Որովհետեւ պատմութիւնը ունի իր տարբերային տրամաբանութիւնը, որ կը միտի բացալայտելու պատմական այնպիսի բացարձակ ճշմարտութիւններ, որոնք կրնան ճանչցուիլ իբրեւ մեկնակէտ Հայկական Հարցի լուծման համար: Պատմութեան կ'անցնի ինչ որ ճշմարիտ է...

Հակէպ

Հովանաւորութեամբ՝

ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ
Առաջնորդ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի

Շնորհանդէս
Գլխաւոր բանախօս՝ Ռուբէն Աւշարեան
Խմբագրի խօսք՝ Հրաչ Սեփեթեան
Գեղարուեստական յայտագիր

ԻՆՉ ԸՆԵԼ
Որպէսզի Զրկուին Անցեալի Սխալները

ՀԲԸՍ

7 Մայիս 2026-ին
Երեկոյեան
Ժամը 7:30-ին

Յարութ Տեր Դաւիթեան

Armenian Society of Los Angeles
117 S Louise St, Glendale, CA 91205
Մուտքը Ազատ - Հանդիսութեան Աւարտին՝ Հիրաւորութիւն

ԼԻՔԱՆԱՆ-ԻՍՐԱՅԷԼ.

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-իս

ԷՏՈՒՐՄՏ ԹԱՇՆԵԱՆ

Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ խաղաղութեան մասին ներկայիս լսուող խօսքերը չեն յառաջանար պատերազմին հակընդդէմ: Անոնք ստեղծուեցան նոյն այդ պատերազմէն: Առանց վերջին ամիսներու բախումներուն եւ բռնութեան՝ չէին ըլլար բանակցութիւններ, չէին ըլլար զինաթափման պահանջներ, եւ չէր ըլլար կարգաւորման մասին լուրջ քննարկում՝ այս մակարդակի վրայ: Այն, ինչ այսօր կը ձեւաւորուի, դիւանագիտական յաջողութիւն մը չէ, այլ զինուորական ուժի քաղաքական քարգնամութիւնը: Լիբանանը այս վիճակին մէջ անգամ մը եւս եղած է ասկէ առաջ: 1983 թուականի մայիսին, ներխուժման, պաշարման եւ արտաքին զինուորական ճնշումի տակ ընթացած բանակցութիւններէն ետք, Լիբանան ստորագրեց համաձայնագիր մը Իսրայէլի հետ՝ նպատակ ունենալով վերջ տալ պատերազմական վիճակին եւ հիմնել բնական յարաբերութիւններու շրջան մը: Այդ փորձը ձախողեցաւ: Այսօր տեղի ունեցածը երկրորդ փորձ մըն է: Իսրայէլ յստակ կեցուցած է, որ այս նոր փորձը պիտի կեդրոնանայ Հրզպալլայի զինաթափման եւ Լիբանանի հետ խաղաղ յարաբերութիւններու հաստատման վրայ:

1983-ի ձախողութիւնը յաճախ կը յիշատակուի որպէս ապացոյց, թէ Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ բանակցութեամբ խաղաղութեան պայմանագիր կնքելը անհնար է: Այս ընթերցումը բնականաբար պատմութիւնը կը շփոթէ ճակատագրի հետ՝ հիմնուելով «պատմութիւնը կը կրկնուի» չափազանց շահագործուած տրամաբանութեան վրայ: Պատմութիւնը երբեք չի կրկնուիր: Պատմութիւնը կը կերտուի: Մայիս 17-ի համաձայնագիրը չձախողեցաւ այն պատճառով, որ Իսրայէլի հետ խաղաղութիւնը ըստ էութեան անհասանելի էր: Ան ձախողեցաւ, որովհետեւ զայն ստորագրած լիբանանեան պետութիւնը անկարող էր զայն գործադրել, որովհետեւ երկրի ներքին բաժանումները զայն վերածեցին անձնատուութեան խորհրդանիշի, եւ որովհետեւ Սուրիան ունէր վրճարական վեթօ անոր կիրառման վրայ: Համաձայնագիրը իսրայէլեան դուրսբերումը կապած էր սուրիական դուրսբերման հետ, Գամասկոս մերժեց զայն, եւ լիբանանեան խմբաւորումները նոյնպէս մերժեցին, պնդելով որ այն պարտադրուած լուծում մըն է: Վերջապէս, Լիբանանի պետութիւնը յանձնուեցաւ այդ ճնշումին տակ: Պայմանագրի գրութիւնը մնաց, բայց անոր պահպանման համար անհրաժեշտ քաղաքական կարգը գոյութիւն չունէր:

Այդ պայմաններէն մի քանին չեն վերացած այսօր եւս: Լիբանանեան պետութիւնը կը մնայ տկար, հասարակութիւնը կը մնայ բաժնուած, եւ Հրզպալլան, թէեւ ծանր կերպով թուլացած է, ասկայն կը շարունակէ գոյութիւն ունենալ երկրէն ներս: Բայց 1983-ի հետ համեմատութիւնը կը շրջի աւելի վճռական իրողութեան մը շուրջ. այն ուժերը, որոնք պատճառ դարձան Մայիս 17-ի ձախողութեան, այլեւս նոյնը չեն: 1983-ին, Իսրայէլի հետ համաձայնագիր մը կը կրկնար տապալի, որովհետեւ լիբանանեան պետութիւնը տկար էր, մինչ մերժող ճամբարը՝ հօգը: Սուրիան ունէր գործուն վեթօ Լիբանանի քաղաքական ապագային վրայ, Հրզպալլան ոչ միայն գոյատեւեց, այլ հետագային դարձաւ յետպատերազմեան կարգին հիմնական զինուած ուժը, իսկ Իրանի շրջանային առանցքը կը լայննար փոխանակ ներկայումս: Այսօր այդ հաւասարումը կտրուկ փոխուած է: Մա չի նշանակեր, թէ Հրզպալլան վերացած է: Ան կը նշանակէ, որ այն պայմանները, որոնք երկար ժամանակ թոյլ կու տային անոր գործել առանց լուրջ հակադէմութեան, կը քայքայուին: Հրզպալլան զինուորապէս եւ քաղաքականապէս տկարացած է, Լիբանանը պաշտօնապէս արգիլած է անոր զինուորական գործունեութիւնը, Սուրիան այլեւս չի գրաւեր Լիբանանը եւ չունի նոյն վեթոյի ուժը որ ունէր 1983-ին, իսկ Իրանը ինք կը գործէ աւելի մեծ ճնշման տակ վերջերս տեղի ունեցած պատերազմէն ետք: Անցեալի տկարութիւնները կը մնան, բայց այլեւս նոյն ձեւով չեն գործակցել Իսրայէլի հետ խաղաղութեան մերժումը: Այժմ անոնք կը նուազեցնեն Հրզպալլայի եւ անոր հովանաւորներուն կարողութիւնը՝ հասարակական ներկայութիւնն ու զինուած ժառանգութիւնը վերածելու արդիւնաւետ քաղաքական վեթոյի: Այս փոփոխութիւնը անբաժանելի է պատերազմէն, որ փոխած է Լիբանանեան ուժերու հաւասարակշռութիւնը այնպիսի ձեւերով, որոնց դիւանագիտութիւնը միայնակ երբեք չէր կրնար հասնիլ:

Ուստի 1983-ի հետ հակադրութիւնը կառուցուածքային է, ոչ թէ մակերեսային: Նախորդ համաձայնագիրը ձախողեցաւ, որովհետեւ Լիբանանի տրեկար պետութիւնը դիմաց գտնուեցաւ իրմէ աւելի հզօր մերժողական խմբակի մը, որ կը յենէր Ասատի Սուրիոյ վրայ, որ կը գրաւէր Լիբանանը եւ կրնար ուղղակի վեթօ դնել իր դէմ եղող որեւէ կարգաւորման: Այդ աշխարհը այլեւս գոյութիւն չունի: Գամասկոսի մէջ այլեւս չկայ Ասատի վարչակարգ մը, որ ի վիճակի է սահմանելու Լիբանանի քաղաքական առաստաղը: Աւելին, Սուրիան ինքն ալ այլեւս 1983-ի դիրքորոշումը չունի Իսրայէլի հետ խաղաղութեան վերաբերող հարցին շուրջ. Իսրայէլի հետ հաշտեցումը խոչընդոտելու փոխարէն, յետ-Ասատեան Սուրիան մտած է ամերիկեան միջնորդութեամբ անվրտանգային բանակցութիւններու մէջ Իսրայէլի հետ եւ առնուազն աւելի երկարաժամկետ տեսանկիւնէ, կը թուի աւելի շահագրգռուած այդ ճակատը կայունացնելու մէջ, քան զայն խափանելու: Հրզպալլան կը մնայ, բայց շատ աւելի տկար վիճակի մէջ եւ աճող ճնշման տակ, մինչ Լիբանանը կը մտենայ ներկայ բանակցութիւններուն՝ գրեթէ առանց լծակներու, իսկ Իսրայէլ կը շարունակէ բանակցիլ պատերազմէն բխած իր գերազանց դիրքէն: Այս անհամաչափութիւնն է, որ երկրորդ փորձը կը դարձնէ հնարաւոր:

Ներկայի առաջարկուող պայմանները կ'արտացոլեն այդ անհավասարութիւնը: Իսրայէլացի պաշտօնեաները բացայայտ կ'ընեն. նպատակը միայն սահմանին վրայ հանգստութիւն վերականգնելը չէ, այլ այն անվտանգային եւ քաղաքական միջավայրը վերաձեւաւորելը, որ ծնունդ տուած է բախումին: Հրզպալլայի զինաթափումը կեդրոնական է այս նպատակին համար: Իսրայէլի համար նոյնքան կարեւոր է հարաւային Լիբանանի մէջ անվտանգային գոտիի մը ստեղծումը: Իսրայէլի ղեկավարները նաեւ յայտնած են, որ հարիւր հազարաւոր տեղահանուած լիբանանցիներու վերադարձը հարաւի

իրենց տուները պիտի կախուած ըլլայ իսրայէլեան անվտանգային պայմաններու կատարումէն: Ասոնք հաւասար կողմերու միջեւ բանակցուելու համար նախատեսուած առաջարկներ չեն: Անոնք պայմաններ են, որոնք կը թելադրուին գերազանց դիրք ունեցող կողմէն՝ ակնկալելով, որ հռետորաբանօրէն կրնայ ըլլայ որ դիմադրուին, բայց գործնականօրէն դժուար պիտի ըլլայ զանոնք կատարել:

Ահա թէ ինչու «պարտադրուած խաղաղութիւն» եզրաբանութիւնը պէտք է վերանայուի: 1983-ին այն մեղադրանքը, թէ համաձայնագիրը պարտադրուած էր, բաւարար էր զայն խաբիւելու համար, որովհետեւ մերժող ուժերը կը պահպանէին զայն արգիլելու կարողութիւնը: Այսօր նոյն մեղադրանքը կը կրկնուի նոյն զգացական ուժը, բայց պարտադիր չէ, որ ունենայ նոյն քաղաքական հետեւանքը: Համաձայնագիր մը կրնայ լայնօրէն դիտուիլ որպէս անօրինական եւ այնուամենայնիւ գործադրուիլ, եթէ զայն տապալելու կարող ուժերը աւելի տկար են, իսկ զայն պարտադրողները՝ աւելի վճռական: Պատմական նախադէպերը ցոյց կու տան, որ յետպատերազմեան պայմաններու մէջ յաղթող կողմին թելադրած պայմանները յաճախ կը մնան առանց լուրջ մարտահրաւերի: Անոնք չեն ընդունուիր առանց բողոքի: Անոնք կ'ընդունուին, որովհետեւ այլընտրանքները գրեթէ գոյութիւն չեն ունենար այլեւս:

Մա խաղաղութեան պայմանագրի յաջողութիւնը չէրաշխատրեր: Լիբանանեան համակարգը կը մնայ փխրուն: Հրզպալլան տակաւին որոշ ազդեցութիւն կը պահէ: Հանրային ընդդիմութիւնը կրնայ տակաւին ապակայունացնել որեւէ համաձայնագիր, որ կը թուի պարտութեան նման: Լիբանանի պատմութիւնը սահուն անցումներու պատմութիւն չէ, այլ յաճախակի կտրուկ շրջադարձերու: Այնուամենայնիւ ներկայ պահը չի կրնար հասկցուիլ որպէս 1983-ի կրկնութիւն: Աւելի ճիշդ է զայն հասկնալ որպէս անոր շարունակութիւնը՝ տարբեր պայմաններու տակ: Առաջին փորձը ձախողեցաւ, որովհետեւ Լիբանանի բաժանումը տապալեց անոր վրայ պարտադրուած համաձայնագիրը: Երկրորդը կրնայ աւելի հեռու երթալ նոյն այդ պատճառի բերմամբ: Լիբանանը տակաւին տկար է, տակաւին բաժնուած, տակաւին նշանաւորուած մրցակցող հաւատարմութիւններով: Բայց այդ պայմանները այլեւս պարտադիր կերպով չեն նպաստեր խաղաղութիւնը մերժող ուժերուն: Անոնք այժմ կրնան նպաստել դուրսէն ձեւաւորուած եւ ներսէն ընդունուած լուծման մը՝ ոչ թէ որովհետեւ ան սկզբունքով կը լուծէ հակամարտութիւնը, այլ որովհետեւ կ'արտացոլէ այն ուժերու հաւասարակշռութիւնը, որ ստեղծած է պատերազմը:

Եթէ այս փորձը ձախողի, պատճառը պիտի չըլլայ այն, որ Լիբանանն ու Իսրայէլը երբեք չեն փորձած անցնիլ այս շենք: Պատճառը պիտի ըլլայ այն, որ նոյնիսկ այնպիսի պատերազմ մը ետք, որ վերաձեւաւորուած է ռազմավարական միջավայրը, այն ուժերը, որոնք կրնան արգիլել նման կարգաւորում մը, տակաւին բաւարար չափով հզօր մնացած են: Եթէ ան յաջողի, այն պիտի չըլլայ յանկարծակի բեկում մը: Այլ պիտի ըլլայ արդէն իսկ իր մեծ մասը որոշուած հակամարտութեան քաղաքական եզրակացութիւնը:

Պէյրութ

Tekeyan Cultural Association & UCLA Armenian Music Program's

Vem Ensemble

2026 Tour

Starring

The UCLA VEM Ensemble & The UCLA Armenian Music Ensemble

Students Mickey Hashim, shvi, and Hayk Gargaloyan, duduk, with special guests folk singer Hasmik Harutyunyan, Antranig Kzirian, oud, and Vardan Baghdasaryan, kamancha



Professor Movses Pogossian violin, Ally Cho violin, Damon Zavala viola, Niall Taró Ferguson cello, performing works of Komitas, Khachaturian, Toumajan, Suni, Gazarovian, Saryan and Schubert

Altadena, CA

Sunday, May 17, 5 p.m.

TCA Beshgeturian Center
1901 N. Allen Ave.

Free admission. For info, email tcawestcoast@gmail.com




ԼՐԱՔԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԱՐՅԱԽԻՑ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին




Ատրպեյճանը ոչնչացրել է Ստեփանակերտի երկու եկեղեցիները

Ատրպեյճանն բռնագրաւուած Արցախի հանրապետութեան տարածքում շարունակուած է ջնջել հայկական հետքը: Օրեր առաջ յայտնի դարձաւ, որ բարբարոս պետութիւնը ոչնչացրել է Ստեփանակերտի Սուրբ Աստուածամօր Յովհաննու եւ Սուրբ Յակոբ եկեղեցիները:



Սուրբ Աստուածամօր Յովհաննու Մայր Տաճար



Սուրբ Յակոբ եկեղեցի

Սուրբ Աստուածամօր Յովհաննու մայր տաճարի հիմնարկէքը կատարուել է 2006 թ, օծումը՝ 2019 թուականին:

Սուրբ Յակոբ եկեղեցու հիմնարկէքը տեղի է ունեցել 2005 թ., կառուցումն աւարտուել է 2007 թ.: Եկեղեցին կառուցուել էր ամերիկահայ բարերար Ներսէս Եփրեմեանի միջոցներով՝ ի յիշատակ նրա վաղամեռիկ որդու՝ Յակոբի յիշատակին:

Այսօր արդէն համացանցային տիրոջ մշտադատարկումը յրստակ ցոյց է տալիս, որ երկու եկեղեցիների տեղերում էլ հարթ հողատարածքներ են: Պաքուի ռեժիմը գլխավոր ոչնչացրել է մեր սրբաբանները:

Երեւանում բացուել է Իսպանիայի Թագաւորութեան հիւպատոսարանը

Ապրիլի 21-ին Երեւանում տեղի ունեցաւ Իսպանիայի Թագաւորութեան Պատուաւոր հիւպատոսութեան բացման արարողութիւնը: Հիւպատոս Աշոտ Փարսեանը համատեղութեան կարգով նաեւ Գուատեմալայի Պատուոյ հիւպատոսն է Հայաստանում:

«Ձգտելու ենք բարձրացնել Իսպանիայի ճանաչելիութիւնը մեր տարածքում՝ հանդիսանալով ինտենսիւ գործող կամուրջ երկու երկրների միջեւ: Այս կառոյցն աւելի քան 20 տարի է, ինչ իրականացում է Հայաստանում՝ խորացնելով կապերն իսպանախօս աշխարհի հետ», - բացման արարողութեան ժամանակ աւել է Փարսեանը:

Մալխաս Ամոյեանը Եւրոպայի հնգակի յաղթող է

Օլիմպիական խաղերի բրոնզէ մեդալակիր, աշխարհի կրկնակի չեմպիոն Մալխաս Ամոյեանը 5-րդ անգամ հռչակուել է Եւրոպայի յաղթող:

Հայ ըմբիշը պայքարը սկսել 1/8 եզրափակչից, որտեղ 4:0 յաղթել էր Շուէտիայի ներկայացուցիչ Կառլ Բաֆին: Քառորդ եզրափակչում Ամոյեանը 10:0 կատարեալ ջախջախել էր Ուրուգուայի ներկայացուցիչ Իրֆան Միրզոեփին, իսկ կիսաեզրափակչում ամենայայտնի էր Մոլտովան ներկայացուցող Ալեքսանդրին Գուտուի նկատմամբ: Հայաստանի հաւաքականի անդամ Ասարժանվալթիեան պրոնզէ մեդալին է 67 քկ. քաշային Կարէնյանեանը՝ գօտենարտում Աւալանեանը շուտով:



Սեփականութեան եւ վերադարձի իրաւունքի վերականգման յոյսով Արցախցիները դիմում են Մարդու իրաւունքների եւրոպական դատարանին

2024 թ. հոկտեմբերին հայաստանեան իրաւապաշտպանները հիմնադրել են «Արցախի Միջազգային Իրաւական Նախաձեռնութիւն»-ը՝ նպատակ

ունենալով միջազգային իրաւունքի միջոցով ներկայացնել արցախցիների իրաւունքների խախտումները: «Միջազգային եւ համեմատական իրաւունքի կեդրոնը» գործընկերների հետ իրականացնում է լայնածաւալ աշխատանք՝ փաստագրելով 2020 թ. 44-օրեայ պատերազմի եւ 2023 թ. իրադարձութիւնների հետեւանքով տեղի ունեցած խախտումները: Բռնի տեղահանութեան հետեւանքով հազարաւոր մարդիկ գրկուել են իրենց հիմնարար իրաւունքներից՝ յատկապէս հայրենիքում ապրելու եւ սեփականութիւնը տնօրինելու իրաւունքից (ամրագրուած ՄԻԵԴ 1-ին արձանագրութեան 1-ին յօդուածով): Կարեւորում է ոչ միայն անհատական իրաւունքների պաշտպանութիւնը, այլեւ արցախցիների հաւաքական վերադարձի իրաւունքի ճանաչումը: Քանի որ ներպետական արդիւնաւէտ պաշտպանութիւն չկայ, հիմնական իրաւական ուղին Մարդու իրաւունքների եւրոպական դատարան դիմելն է: Նախաձեռնութիւնը հաւաքում է տեղահանուած անձանց տուեալներն ու փաստաթղթերը՝ անհատական զանգատներ պատրաստելու համար, որոնք ներառում են նաեւ նրանց անձնական պատմութիւնները՝ ներկայացնելով տեղահանութեան եւ իրաւունքների խախտման ամբողջական պատկերը:

Պատմութեան մէջ առաջին անգամ Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդից պետական հեռուստաալիքը ուղիղ միացում կ'ապահովի մինչեւ կէսօր, ոչ թէ կէսգիշեր

Հայկական 24News լրատուականը գրում է, որ, ըստ իր ունեցած հաւաստի տեղեկութիւնների, Հայաստանի Հանրային հեռուստաընկերութիւնը, որը պետութեան ենթակայութեան ներքոյ է գործում, այս տարի Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդից ուղիղ եթերի ազդանշանը ապահովելու է մինչեւ կէսօր՝ Երեւանի ժամանակով 13:00: Նշենք, սակայն, որ հանրային ալիքը նախկինում Յեղասպանութեան յուշահամալիրից եթերն ապահովում էր ամբողջ օրուայ ընթացքում:

Ատրպեյճանից Հայաստան է ուղարկուել դիզելային վառելիքի հերթական խմբաքանակը

Ատրպեյճանական պետական APA լրատուականը հաղորդում է, որ ապրիլի քսանին Ատրպեյճանից Հայաստան է արտահանուել դիզելային վառելիքով լի 16 երկաթուղային վագոն: Այլ մանրամասներ չեն հաղորդում: Վառելիքի մատակարարումները Ատրպեյճանից Հայաստան սկսուել են 2025 թուականի դեկտեմբերից: Անցած անգամ Հայաստան էր ուղարկուել դիզելային վառելիքով բեռնուած 22 երկաթուղային վագոն:



Ապրիլի 21-ին Ազգային հերոս Թաթուլ Կրպեյեանը կը դառնար 61 տարեկան

«Ինչու՞ էք վախենում մահից: Հողի համար ես հէնց հիմա պատրաստ եմ մեռնելու: Հողի, ազգի համար: Ես ոչ մի անգամ չեմ զնայ Երեւանի օդանաւակայանում իջնեմ, ասեմ՝ Գետաշէնը յանձնեցի: Ես այստեղ կը մեռնեմ, այդ բանը չեմ անի...»:

Թաթուլ Կրպեյեան

Ապրիլի 21-ին ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյեանը կը դառնար 61 տարեկան, բայց յաւերժ մնաց 26...:

Թաթուլը ծնուել է 1965 թուականի ապրիլի 21-ին Հայաստանի Թալինի շրջանի Արեգ գիւղում: Կրպեյեանը եղել է Արցախեան շարժման երիտասարդական թելի սիրուած առաջնորդներից, զանգուածային երթերի ու հանրահաւաքների, մատացոյցների ու դասադուլների կազմակերպիչներից եւ ուսանողութեան շրջանում քարոզչութիւն իրականացնող առաջամարտիկներից մէկը:

1990 թուականի սեպտեմբերին Թաթուլը մեկնեց Արցախ, որտեղ վիճակը շարունակում էր վատթարանալ: Իր իսկ հիմնած զինուած խմբով 1990 թուականի սեպտեմբերից մինչեւ 1991 թուականի մայիս ամիսը ղեկավարել է Գետաշէնի ենթաշրջանի (ինքնապաշտպանութիւնը) ընդդէմ ատրպեյճանական զինուած ուժերի, ռուսական բանակի եւ ոստիկանական խմբաւորումների: Չոհուել է 1991 թուականի ապրիլի 30-ին՝ Օղակ գործողութեան ժամանակ: 1996 թուականի սեպտեմբերի 20-ին արժանացել է Հայաստանի Ազգային հերոսի կոչմանը: Պարգեւատրուել է նաեւ «Հայրենիք» շքանշանով:



ՅԱՂԹԱՆԱԿԻ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ.

ԻՐԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՓՈԹԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

ԳԵՐՏԵՐՈՒԹԻՒՆԸ ԸՓՈԹԻ ՄԵՋ ԻՐԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆԱՄԱՐՏ ՀԱՇՎԸ

Սպիտակ տան փակ սենեակներում մեջ այս օրերում ընթացող հիմնական քննարկումը կը վերաբերի Իրանին:

Ի վերջոյ, Միացեալ Նահանգները պիտի շարունակեն՝ «կէս մնացած» պատերազմը, թէ՛ ընդհանրապէս, եւ մասնաւորապէս նախագահ Թրամփը, երբեք պատրաստ չեն շարունակելու անցեալ Փետրուարի աւարտին սկսած գործողութիւնները:

Նոյնիսկ եթէ «ներսէն» դիտարկենք ԱՄՆ-ի ընդհանուր իրավիճակը, այն շատ աւելի աղօտ ու մշուշոտ կը թուի, քան՝ արտաքին աշխարհէն դիտուած:

Իրանեան հարցով Միացեալ Նահանգներու առաջնային նպատակը Իրանը գրկելն էր աթոմական ռումբ ունենալու բոլոր հնարաւորութիւններէն: Այս մօտեցումը, որ կրնար Իրանի դէմ լայնածաւալ պատերազմի շուրջ համախորհրդով սպառնալու, այսօր կարծեք սպառնած է: Իրականութեան մէջ ան ամբողջովին չէ սպառնած, բայց առնուազն ժամանակատրապէս մէկդի դրուած է:



Պատերազմի առաջին շաբաթներում յաճախ կը շեշտուէր Իրանի «հարբուստացում ուրանի» խնդիրը: Սակայն զարգացումներում ընթացքին Միացեալ Նահանգները կարծեք զանց առին այդ առաջնահերթութիւնը եւ անցան այլ նպատակներու:

Այս իրավիճակը որոշ չափով կը յիշեցնէ Իրանի դէմ պատերազմը, երբ առաջնային հիմնաւորումը քիմիական վտանգաւոր նիւթերու «թրթածրար»-ն էր, որ հետագային դուրս եկաւ օրակարգէն, եւ գործողութիւնները շարունակեցան բոլորովին այլ ուղղութեամբ ու նպատակներով:

Այսօր եւս նմանատիպ տատանումներու մէջ է աշխարհի հզօրագոյն ուժը՝ Միացեալ Նահանգները:

Անշուշտ, կարելի է երկար շարադրել այն ծանր հարուածները, որոնք ԱՄՆ-ն եւ Իսրայէլը հասցուցին Իրանին՝ սկսելով երկրի բարձրագոյն քաղաքական եւ ռազմական շրջանակներում քիթախաւորումէն, շարունակելով ռազմավարական եւ էներգետիկ ենթակառուցումներու դէմ հարուածներով: Սակայն այս բոլորը հեռու մնացին հիմնական նպատակի իրականացումէն՝ Իրանի աթոմական կարողութիւնները չեզոքացնելու խնդրէն:

Այս բոլորին գուցահեռ, ԱՄՆ քաղաքական վերնախաւին, եւ մասնաւորապէս նախագահ Թրամփի տեսադաշտին մէջ, որպէս մշտական ուրուական կը շրջագայէր «ցամաքային գործողութեան» տարբերակը: Այդ սցենարը կրնար դառնալ այն միջոցը, որով Միացեալ Նահանգները կը փորձէին ուղղակի հասնիլ իրանեան ուրանի պաշարներուն:

Սակայն նման գործողութիւնը կրնար ունենալ լուրջ հետեւանքներ՝ առաջացնելով ոչ միայն տարածաշրջանային պայթուցիկ վտանգ իրավիճակ, այլեւ ներքին խոր ցնցումներ ԱՄՆ-ի քաղաքական, սպահովական եւ տնտեսական համակարգերում մէջ:

Նաեւ այս պատճառով այլ ներկայ դրութեամբ Միացեալ Նահանգները կը ներկայանայ որպէս որոշակի շփոթի մէջ գտնուող գերտէրութիւն:

Երբ նախագահ Թրամփ կը յայտարարէ, թէ «Մենք յաղթեցինք Իրանին», այդ պնդումը ամբողջովին չի համապատասխանէ իրականութեան: Այլ հարց է, թէ Իրան ինչ վիճակի մէջ է, բայց նոյնքան կարեւոր է յիշել, որ Միացեալ Նահանգներու հիմնական նպատակը՝ Իրանի աթոմական կարողութիւններու ոչնչացումը, տակաւին ամբողջութեամբ չէ իրագործուած:

ԹՈՒՆԱՅԱԾ ԻՐԱՆ. ՉԻՐԱԿԱՆԱՅԱԾ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Անշուշտ, շատ դժուար է որոշել, թէ ո՞ր կողմը յաղթական պիտի ըլլայ Միացեալ Նահանգներու-Իսրայէլի եւ միւս կողմէ Իրանի միջեւ ծաւալուած պատերազմը:



րազմին մէջ, որովհետեւ կողմերում նպատակներն ու յաղթանակի պատկերացումները էապէս տարբեր են: Այս անորոշութիւնը աւելի կը խորանայ այն հանգամանքով, որ Միացեալ Նահանգներու պարագային պատերազմի ամե-

նածանր ծախսերը ոչ միայն մարտադաշտին մէջ են, այլ նաեւ անկէ դուրս՝ տնտեսական հետեւանքներով եւ դիւանագիտական դիրքերու թուլացումով:

Նախագահ Տրամփը եւ անոր խորհրդականները ներկայացուցած են բազմաթիւ նպատակներ, որոնց մէկ մասը սահմանափակ է, իսկ միւսը՝ աւելի լայն եւ համապարփակ: Անոնց շարքին են Իրանի միջուկային ծրագրի կասեցումը, հրթիռային կարողութիւններու եւ սովորական զինանոցին թուլացումը, Թեհրանի կողմէ «Հրզպալլա»-յի, «Համաս»-ի եւ այլ փոխանորդ ուժերու աջակցութեան սահմանափակումը, եւ ամենահաւակնուող՝ վարչակարգի փոփոխութիւնը Թեհրանի մէջ:

Այս նպատակներում հասնելու համար Միացեալ Նահանգներն ու Իսրայէլը քիթախաւորած են իրանական ղեկավար շրջանակներ, ինչպէս նաեւ հարուածներ հասցուցած ռազմական ուժերուն եւ ենթակառուցումներուն:

Իրանի համար, իր հերթին, գլխաւոր նպատակը վարչակարգի պահպանումն է եւ հնարաւորութեան պարագային, Միացեալ Նահանգներու եւ Իսրայէլի դէմ զսպող կարողութեան վերականգնումը: Թեհրան երկար տարիներու ընթացքին մեծ քաղաքական եւ ռազմավարական ներդրում կատարած է իր միջուկային ծրագրին մէջ, ինչպէս նաեւ խոր կապեր հաստատած իր տարածաշրջանային փոխանորդ ցանցին հետ: Իրանը կը կարծէ, եւ հաւանաբար ոչ առանց հիմքի, որ եթէ կարողանայ դիմանալ այս պատերազմի հարուածներուն, ժամանակի ընթացքին կրնայ վերականգնել իր կարողութիւնները եւ հասնիլ իր նպատակներուն:

ԱՄՆ-ն եւ Իսրայէլը ռազմական դասական իմաստով որոշ յաջողութիւններ արձանագրած են: Պատերազմի սկիզբէն ընդամենը մէկ շաբաթ անց Իրանի հրթիռային յարձակումները զգալիօրէն՝ շուրջ 90 տոկոսով, նուազած են՝ օդային հարուածներու եւ ճնշման գործողութիւններու հետեւանքով: Բացի այդ, Իրանը կորսնցուցած է հրթիռային արձակման կայաններ եւ արտադրական կարողութիւններ, իսկ ամերիկեան աղբիւրներ կը պնդեն, թէ իրանական ռազմածովային ուժերու զգալի մասը վնասուած կամ ոչնչացուած է: Իսրայէլը, իր հերթին, վերացուցած է հարիւրաւոր իրանցի բարձրաստիճան պատասխանատուներ:



Այնուամենայնիւ, այս կորուստները, թէւ նշանակալի են, դեռ չեն բաւարարէր Միացեալ Նահանգներու աւելի լայն ռազմավարական նպատակներում հասնելու համար: Իրանը, որ պատերազմէն առաջ ալ գերուժեղ ռազմական պետութիւն չէր, այժմ աւելի թուլացած է, սակայն ոչ ամբողջովին կորուսած: Անիկա կրնայ վերականգնել իր հրթիռային եւ ռազմական կարողութիւնները՝ շնորհիւ մարդկային եւ գիտական ներուժին, թէւ այդ գործընթացը ժամանակ է մեծ միջոցներ կը պահանջէ:

Բացի այդ, քանի որ Իրանը այժմ չունի լիարժէք գործուն օդային պաշտպանութիւն, Իսրայէլը սպառնալից կրնայ շարունակել հարուածներ հասցնել անոր ռազմավարական կէտերուն, նոյնիսկ զինադադարի պարագային:

Իրանի միջուկային ծրագիրը ծանր հարուածներ կրած է, սակայն սա ամբողջովին նոր իրավիճակ չէ: Նախկին տարիներում արդէն իսկ ամերիկեան եւ իսրայէլեան գործողութիւնները զգալիօրէն դանդաղեցուցած էին այդ ծրագրի զարգացումը:

Վարչակարգի փոփոխութիւնը, բնականաբար, տեղի չէ ունեցած: Հակառակ այն իրողութեան, որ վերջին շրջանին բողոքի շարժումներու դաժան ճնշման եւ մեծաթիւ զոհերուն, ներկայ վարչակարգը կը շարունակէ պահպանել իր իշխանութիւնը: Նոյնը կը վերաբերի Իրանի փոխանորդ ցանցին՝ Լիբանանի «Հրզպալլա»-յին եւ Եմենի «Հուսիներ»-ուն, որոնք թէւ թուլացած են, բայց դեռ կը շարունակեն սահմանափակ գործողութիւններ իրականացնել:

Միեւնոյն ժամանակ, Իրանը յաջողած է բարձրացնել պատերազմի գինը Միացեալ Նահանգներու եւ անոր դաշնակիցներուն համար: Պարսից ծոցի երկիրներում դեմ իր գործողութիւնները պատճառած են մարդկային եւ տնտեսական կորուստներ, ինչպէս նաեւ վնասած են այդ պետութիւններու միջազգային հեղինակութիւնը: Սակայն երկարաժամկէտ առումով այս քայլերը կրնան նաեւ հակառակ ազդեցութիւն ունենալ՝ արագացնելով այդ երկիրներու մերձեցումը ԱՄՆ-ի եւ Իսրայէլի հետ:

Ամենակարեւոր հետեւանքներէն մէկը Պարսից ծոցի նեղուցի խափանումն է, որուն հետեւանքով համաշխարհային շուկաներում մէջ մաքի եւ կազի գիները կտրուկ բարձրացած են: Այս զարգացումը ազդեցութիւն ունեցած է նաեւ պարարտանիւթերու եւ առաջին անհրաժեշտութեան ապրանքներու վրայ՝ ստեղծելով համաշխարհային տնտեսական ճնշում:

Երկարաժամկէտ առումով, Միացեալ Նահանգներու վնասները չեն սահմանափակուիլ միայն Մերձաւոր Արեւելքով: Պատերազմը սպառած է նաեւ դժուար փոխարինելի ռազմական պաշարներ՝ օրինակ հրթիռային համակարգեր, ինչ որ կրնայ թուլացնել ԱՄՆ-ի դիրքերը այլ տարածաշրջաններում մէջ, ներառեալ Եւրոպան եւ Ասիան:

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111-ԱՄՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՄ

Հակառակ որպես 20-րդ դարու առաջին ցեղասպանության ենթարկուած ժողովուրդ, հայ ազգը վերականգնեցաւ եւ իր վերածնունդը ապրեցաւ, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ սփիւռքի մէջ ու վերատիրացաւ իր անկախ հանրապետութեան:



Չորեքշաբթի, 22 Ապրիլ 2026-ին, վարժարանի Յակոբ Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 111-ամեակի ոգեկոչումը: Յայտագիրը ընթացք առաւ քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ, որմէ ետք Միջն. Գ. դասարանի աշակերտուհի՝ Բարսի Օրուկեան իր բացման խօսքին մէջ ըսաւ. «Մեծ Եղեռնի յուշատօնը մեզի համար առիթ մըն է կանգ առնելու եւ մտածելու մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն մասին: Մենք ենք մեր ազգին արժեքներուն ժառանգորդները, զորս մեզի փոխանցուեցան մեր նախնիներէն: Պիտի պահպանենք զանոնք, որպէսզի հայ ժողովուրդը միշտ ապրի»:



Բացման խօսքէն ետք, Նախ. Ե.-էն Միջն. Գ. դասարանի խումբ մը աշակերտներ ներկայացան Վահան Թէքեանի բանաստեղծութիւններու ծաղկաքաղով, ապա Նախ. Գ. դասարանի աշակերտները իրենց քաղցրահնչիւն ձայնով ելոյթ ունեցան «Կռուկ Գնա՝ Մեր Երկիր» խմբերգով՝ Պրն. Ղազար Քէօշկէրեանի նուագակցութեամբ: Նախ. Զ. դասարանի աշակերտները Օրդ. Արին Սէֆէրեանի առաջնորդութեամբ հանդէս եկան «Ախպերս ու Ես» պարով, որուն յաջորդեց «Աշխարհահռչակ Հայեր» տեսերիզի ցուցադրութիւնը: Նախ. Ա. եւ Բ. դասարաններու մեր սիրատուն աշակերտները եռագոյնը բարձր պարգաձ՝ խորխտ քայլերով տողանցեցին սրահին մէջ «Ձիճուորն Եւ Ես Փոքրիկ»-ի երաժշտութեան ներքոյ:



Ապա բեմահարթակ բարձրացաւ վարժարանի հոգաբարձութեան փոխատենապետ՝ Տիար Պերճ Արապեանը, այս անգամ իբրեւ օրուան հիւր բանախօս, որ վարժարանի հրաւերին ընդառաջելով փոխանցեց օրուան պատգամը: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ, թէ Հայոց Յեղասպանութիւնը մէկ օրուան մէջ չեղաւ, այլ երկարեցաւ 30-35 տարիներու վրայ, սակայն զայն կը նշենք Ապրիլ 24-ին, որովհետեւ այդ օր տեղի ունեցաւ հայ մտաւորակաւորութեան ձեռքակալութիւնը: Այս փառանքէն ճողոպրեցաւ միայն Կոմիտաս վարդապետ, որ կորսնցուց իր հոգեմտաւոր հաւասարակշռութիւնը՝ տեսնելով հայ ժողովուրդին արհաւիրքը: Ապա ան կեղորոնացաւ կարեւորագոյն երկու դրդապատճառներուն վրայ, որոնց հետեւանքով տեղի ունեցաւ Հայոց Զարդը. Օսմանեան կայսրութեան տնտեսութեան եւ զանազան ոլորտներու մէջ հայ ժողովուրդին վայելած նախանձեղի վարչակաւն դիրքերը, ինչպէս նաեւ՝ այդ օրուան հզօր կայսրութիւններուն կողմէ արագացնելու համար Օսմանեան կայսրութեան քայքայումը փոքրամասնութիւններուն ինքնավարման պատճառաբանութեամբ, կարեւոր տիրապետելու համար անոր տիրապետութեան տակ գտնուող բնական հարստութիւններուն, որոնց զխաւրագոյնն ու կարեւորագոյնը նա.ֆթն է:

(Շար.ը էջ 12)

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԸ «ՓՈՔՐԻԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ» ՇԱՔԱԹՕՐԵԱՅ ԴՊՐՈՅՈՒՄ

Ապրիլի 24-ին լուսինն ատելի խօսուն է, քան բառերը, քանի որ յաճախ դրանք չեն բաւարարում արտայայտելու այն ցաւը, որը փոխանցուել է սերունդէտերունդ: Այդ լուսինն մէջ հնչում են շատուած աղօթքներ, շտուած ճիչեր եւ կորսուած կեանքերի յիշողութիւններ, որոնք ոչ մի խօսք չի կարող ամբողջութեամբ փոխանցել: Այն մոռացութեան լուսինն չէ, այլ խորին յարգանքի եւ յիշողութեան դրսեւորում, երբ իրաքանչիւր սիրտ իր ներսում վերապրում է անցեալի ահասարտութիւնը՝ պահպանելով ճշմարտութիւնն ու անարգութեամբ արդարութիւնը: Այդ օրը մարդիկ խօսում են աչքերով, զգում առանց բառերի եւ յիշում առանց սահմանների, որովհետեւ ցաւը դառնում է միասնական յիշողութիւն, իսկ լուսինը՝ նրա ամենագնիւ արտայայտութիւնը:



Ապրիլի 24-ը նաեւ միասնութեան օր է: Աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայերը միաւորուած են նոյն զգացումով՝ յիշելու եւ պահանջելու մեր ունահարուած ու անտեսուած իրաւունքները: Այդ օրը մենք գիտակցում ենք, որ յիշողութիւնը միայն անցեալի մասին չէ, այլ նաեւ ապագայի համար է, որպէսզի նման արհաւիրքներ այլեւս չկրկնուեն... երանի՜ չկրկնուեն...

Մեծ եղեռնի 111-րդ տարեկիցի առթիւ Ապրիլի 25-ին «Փոքրիկ հրեշտակներ» շաքաթօրեայ մայր դպրոցում, ասանդոյթի համաձայն, դասերն սկսուեցին յարգանքի եւ աղօթքի, սրբոց բարեխօսութեան արարողութեամբ: Աշակերտներն ասանդաբար եկեղեցի էին եկել ծաղիկներով: Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարում Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տէր Յովնան արեւախիղաղու Տերտերեանի օրհնութիւնն ու պատգամը փոխանցեց եկեղեցու հովիւ արժանապատիւ տէր Խաժակ քահանայ Շահբազեանը: Ապա տէր հայրը ընդգծեց, որ «Աստուծոյ յաւիտենական պատգամներից մէկը սերն է, որը ոչ միայն զգացում է, այլ աստուածային ներկայութիւն մարդու սրտում, կոչուած՝ լուսաւորելու աշխարհը եւ միաւորելու մարդկանց: Ինչպէս գրուած է Աստուածաշնչում. «Աստուած սեր է, եւ ով մնում է սիրոյ մէջ, Աստուծոյ մէջ է մնում, եւ Աստուած՝ նրա մէջ» (Ա Յովնաննէս 4:16): Նա շեշտեց, որ այս սերն է կամուրջ դառնում երկնքի ու երկրի միջեւ, որով հաւատացեալը հաղորդակցուած է ոչ միայն Աստուծոյ, այլեւ Նրա սրբերի հետ: Սրբոց նահատակները, իրենց կեանքով վկայելով կատարեալ սէրը, դարձել են կենդանի օրհնակներ եւ բարեխօսներ, ովքեր կանգնած են Աստուծոյ առաջ՝ աղօթելով մարդկութեան համար»:



Ապա աշակերտները դպրոցի տնօրէն բարեշնորհ Յովնաննէս սարկաւազ Գումրուեանի առաջնորդութեամբ եւ ուսուցիչների ուղեկցութեամբ գնացին Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակների խաչքարի մօտ՝ իրենց խոնարհութեամբ մատուցելու: Միասնական «Տէրունական աղօթք»-ից յետոյ «Փոքրիկ հրեշտակներ»-ի քայքայ շուրթերից հնչեցին խմբակային արտասանութիւններ՝ մեղմ, յուզիչ եւ միաժամանակ հպարտութեամբ լի: Նրանց ձայները միաւորուած էին մէկ ամբողջութեան մէջ՝ ստեղծելով գեղեցիկ հնչիւն, որը լցրել էր եկեղեցու բակը: Ամեն բառ արտասանում էր խոր զգացումով, կարծես իրաքանչիւր աշակերտ իր սրտից էր խօսում: Այդ միասնական ձայնի մէջ կար է՝ յիշողութիւն, եւ՝ սէր, եւ՝ յարգանք: Ներկայ ծնողները լուռ էին, որովհետեւ այդ պահին բառերը ատելորդ էին: Խմբակային արտասանութիւնը դարձաւ մի փոքրիկ, բայց կարեւոր կամուրջ՝ անցեալի եւ ներկայի միջեւ: Այն յիշեցրեց, որ նոյնիսկ փոքրիկ շուրթերից հնչող խօսքը կարող է մեծ նշանակութիւն ունենալ, երբ այն բխում է անկեղծ սրտից: Ծաղիկների խոնարհութիւնից յետոյ աշակերտները վերադարձան դասարաններ՝ շարունակելու օրուայ խորհուրդն ու պատգամը:


Այս օրը դարձաւ ոչ միայն յիշողութեան, այլ նաեւ հաւատքի, սիրոյ եւ ինքնութեան վերանորոգման պահ, որովհետեւ Սրբոց նահատակների բարեխօսութեամբ եւ Աստուծոյ սիրոյ լոյսով ամրացած՝ այս սերունդը կոչուած է պահելու ճշմարտութիւնը, փոխանցելու այն եւ կատուցելու մի աշխարհ, որտեղ արդարութիւնն ու խաղաղութիւնը յաղթում են ցաւին:

ՄԱՅ ԵՂԻԱՉԱՐԵԱՆ 2-րդ դասարանի ուսուցչուհի

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ Կ՛ՈՒԳԵԿՈՉԵ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111-ԱՄԵԱԿԸ

Հայկազեան համալսարանը հանդիսատես կերպով ոգեկոչեց Հայոց Ցեղասպանության 111-րդ տարելիցը՝ յարգելով մեկուկես միլիոն զոհերու յիշատակը եւ վերահաստատելով իր յանձնառուքինը պատմական ճշմարտութեան, արդարութեան եւ հայկական ինքնութեան պահպանման նկատմամբ:

Ապրիլ 24-ի երեկոյեան, համալսարանի անդամները համախմբուեցան Մուկար շէնքի պարտեզին մէջ՝ յուզիչ արարողութեան մը համար, որ նշուեցաւ երաժշտութեամբ, խորհրդաձայնութեամբ եւ աղօթքով: Լուսինան մէջ կազմուած հանդիսատեսը շրջանակի մը մէջ, մասնակիցները յարգանքի մատոյց կատարեցին մոմերով եւ համատեղ լուսնութեամբ՝ ծաղիկներ գետեղելով խորհրդանշական յուշակոթողի ստորոտին՝ ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան զոհերուն:



Ոգեկոչումը սահմանափակուած չէր միայն յիշատակումով: Ան կը ներկայացնէր արժանապատուութեան, արդարութեան, վերածնունդի եւ յիշելու բարոյական մնայուն պարտաւորութեան հաւաքական վերահաստատում մը: Հաւաքը նաեւ յարգեց մարդկութեան դէմ գործուած ոճիրներու բոլոր զոհերուն յիշատակը՝ ազգերու եւ պատմութեան ընթացքին:



Հայկազեան համալսարանի նախագահ Վերապատուելի Տոքթ. Փօլ Հայտոսեան (աջից) եւ իր կողքին՝ համալսարանի շրջանաւարտներէն եւ Լիբանանի ընկերվար կուսակցութեան ղեկավար՝ Ուալիտ Ժոմպար:

Արարողութեան մաս կը կազմէր գեղարուեստական յայտագիր: Երաժշտական ակումբի անդամ Մարք Կիլիկիւեան ներկայացուց Շարլ Ազնաւուրի «Ils sont tombés»-ն: Այնուհետեւ, աղօթք կատարեց համալսարանի հոգեւոր հովիւ Տ. Ուիլյարթ Վան Սան:

Իր խօսքին մէջ, համալսարանի նախագահ Վերապատուելի Տոքթ. Փօլ Հայտոսեան ներկայացուց խորաքափանց անդրադարձ մը յիշողութեան, արդարութեան եւ բարոյական պատասխանատուութեան շուրջ: «Յիշողութիւնը արդարութեան համար գործելու գլխաւոր միջոցներէն մէկն է: Սակայն պատմութեան խեղաթիւրումը յանցագործին կողմէ ժխտման միջոց մըն է: Յիշելն ու արդարութիւն պահանջելը քաղաքական խաղաքարտեր չեն պետութիւններու սեղանին վրայ, այլ ցեղասպանութեան բնական արձագանգ են: Նահատակները յիշելով՝ մենք կը վերահաստատենք ամէն մարդկային կեանքի սրբազան արժանապատուութիւնը, որովհետեւ անմեղներուն եւ անոնց սերունդներուն աղաղակը երբեք չի կորսուիր Աստուծոյ առջեւ», ըսաւ ան:



Ան նաեւ ընդգծեց Ապրիլ 24-ի շարունակական արդիականութիւնը. «Ապրիլ 24-ը միայն թուական մը չէ, այլ՝ խղճին ուղղուած կոչ մըն է: Նոյն խիղճը այսօր կոչուած է սգալու Հայոց Ցեղասպանութեան ժխտման նոր ձեւերը եւ մեր շրջանին մէջ տեղի ունեցող ցեղասպանութիւններու նոր դրսեւորումները»:

Կեդրոնացնալով համալսարանի ակադեմական առաքելութեան վրայ՝ Հայտոսեան եզրափակեց. «Ասիկա ակադեմական հաստատութիւն մըն է, եւ մեր հիմնական բարոյական կոչումներէն մէկը մեր համայնքին ստրկեցնելու ապրիլ խաղաղութեան եւ արդարութեան համար, եւ կոչել ոճիրները իրենց անուններով՝ անկախ յանցագործէն, գործուած ժամանակէն կամ ծաւալէն»:

Այս ոգեկոչման միջոցաւ, Հայկազեան համալսարանը անգամ մը եւս պաշտպանեց ճշմարտութիւնն ու արդարութիւնը, սերմանելով յիշատակի ժառանգութիւն մը՝ ապագայ սերունդներուն համար:

24 ԱՊՐԻԼԻՆ, ՊԻՏԻ ՈՂԵԿՈՉՈՒՄԻՆ ՆԱԵՒ ՀԱՅԵՐԸ ՓՐԿՈՂ ԹՈՒՐՔԵՐՆ ԱՆ

Տոքթ. ՍԱՐԳԻՍ ԱՏԱՍ

1915-ի Մեծ Եղեռնի ժամանակ, կային նաեւ բազմաթիւ հայեր ջարդէն փրկող բարեխիղճ, արդար, խաղաղասէր անթիւ թուրքեր, որոնք դէմ էին կատարուած սարսափազդու ոճրագործութեան, վայրագութեան, հայերու սպանութեան: Անոնք, իրենց կեանքը վտանգի տակ դնելով հայերը իրենց պաշտպանութեան տակ առին:



Կային նաեւ թուրք պաշտօնեաներ, օրինակ՝ Քոնիայի եւ Հալէպի նահանգապետ Դելալ Պէյը, որ կանխեց մեծ թիով հայերու Տէր Ջօր ուղարկումը: Անքարա քաղաքի կուսակալ Մազհար Պէյ դէմ էր իր քաղաքի բնակիչ հայերուն տարագրութեան, հետեւաբար Օգոստոս 1915-ին պաշտօնանկութեան ենթարկուեցաւ: Քիւրահիա քաղաքի քաղաքապետ Ֆայթ Ալի Դէպէնսօյ, ոչ միայն արգելք եղաւ Քիւրահիացի հայերուն տարագրութեան, այլ նաեւ չի խնայեց բոլոր տեսակի օգնութիւնն ու ջերմ ցուցաբերում հարեան քաղաքներէն Քիւրահիա ժամանած հայերուն: Ան ստեղծեց հնարաւորութիւններ, որպէսզի հայ երեխաները կրթութենէն չզրկուին եւ այս ուղղութեամբ մեծ ջանքեր կատարեց:

Գաւառապետ Հիւսէյն Նէսիմ Պէյը, գաւառապետի տեղակալ Սապիթ Պէյը, Կուսակալ Ֆերիտ Պէյը, քաղաքապետ Պէտիր Նուրի Պէյ, որոնք մերժած էին տեղափոխման հրամանը, եւ նաեւ Մեծ Եղեռնի դէմ կանգնող մեծ թիով բարեսիրտ արդար, ողջամիտ թուրքեր սպանուեցան Տիգրանակերտի կուսակալ Տթթ. Ռէշիտ Պէյի հրամանով:

Ապրիլ 24-ի յիշատակի օրը, եւ կ'ուզեմ հայ նահատակներուն հետ միասին ոգեկոչել նաեւ 1915 թուականին իրենց կեանքը վտանգի տակ դնելով, հայերու հետ եղած, հայերու օգնող խղճմտանք ունեցող բոլոր թուրքերը, որոնք դէմ էին 1915-ին կատարուած անմարդկային ոճրագործութեան եւ կը պաշտպանէին հայերը ու անոնց գոյատեւման համար գոհողութիւններ ըրին:

Կը յուսամ, թէ Ապրիլ 24-ի յիշատակումները, առիթ կը ստեղծեն խղճի հաշուետուութիւն մը ընելու, այն մտայնութեան որ անցեալին մարդկութեան նկատմամբ յանցանք գործած է եւ կ'օգնէ նաեւ այդ յանցաւոր մտայնութեան եւ այդ մտայնութենէն վնասուող կողմերու միջեւ «Արդարութեան ու Խաղաղութեան Ընդհատը Լեզու» մը գտնելու համար:

Ես յարգանքով եւ ողորմութեամբ կը խոնարհիմ 24 Ապրիլ 1915 թուականի բոլոր զոհերու յիշատակին առջեւ:

Խումկ եւ Աղօթք անոնց բոլորի հոգիներուն:

Գերմանիա

ԱՅՆԹՈՒՐԱՅԻ ՆԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՎՈՒԹԵՐԸ ԽԱՅՏԱՅԻՆ...

(Շարունակուած 3-րդ էջէն)

Ոգեկոչման երեկոյի ամբողջ ընթացքին, ներկաները մեծ հետաքրքրութեամբ կ'ընթրէին իրենց դիմաց խորխոր կանգնած խաչքար-յուշարձանի մանրամասնութիւնները: Հայոց ցեղասպանութեան զոհերուն եւ հայ որբերուն նուիրուած յուշարձանը ոչ միայն սգոյ, այլեւ ազգային ինքնութեան պահպանման համար մղուած պայքարի խորհրդանիշ էր, որուն իրագործումն ու բացումը կատարուած էր ազգամեծար ու մշակութասէր Յարութ Խաչատուրեանին նախաձեռնութեամբ ու տիկին Գոհար Խաչատուրեանին ձեռնամարտով:

Ուստի լիբանանահայ գրքահաւաքողը եւ ուսումնասիրող պրոֆ. Կարօ Տէրունեան հակիրճ կերպով ներկայացուց խաչքարի միտք բանին: Յուշակոթողը իր մէջ կ'ամփոփէ մշակոյթ ու պատմութիւն: Անոր գազափին տեղադրուած է Կիլիկիոյ Լեւոն թագաւորի թագին կրկնօրինակը: Խաչքար-կոթողին վրայ քանդակուած է Կիլիկիոյ թագաւորութեան դրօշը եւ հինգ որբուկներու պատկերներ: Իսկ անոր վահանին մէջ խիզախօրէն դրոշմուած է մեր փառապանձ ԱԲԳ-ը եւ հաղորդակցութեան խորհրդանիշ քնարը: Պատուանդանին վրայ չորս լեզուներով գրուած է հետեւեալը. «Ի յիշատակ հայ նահատակներուն, որոնք զոհ գացին օսմանեան իշխանութեան գործադրած ցեղասպանութեան»: Յուշարձան-կոթողի սանդխամատին վրայ նստած է պրոնզայ քանդակ որբուկ մը, ձեռքին մէջ բռնած՝ ոսկեգօծ երկրագունդը, որ կը մարմնաւորէ թէւ տառապած, բայց միշտ դէպի կեանք ձգտող ու կեանքին յաղթող մեր ժողովուրդը:

Ոգեկոչման երեկոյի եզրափակիչ մասով իր սրտաբախ խօսքը յայտնեց լիբանանահայ երեսփոխանուհի Փոլա Եագուպեանը, անդրադարձ կատարելով Ցեղասպանութենէն վերապրած իր հօր.- Մենք (քոյրս եւ ես) Եղեռնէն վերապրողի զուակներ ենք: Մենք ականատես եղած ենք հօրս արցունքներուն, երբ ամէն գիշեր մեզի կը պատմէր թէ ինչպէս փրկուած էր թուրքին ետքաղանէն: Որքան դժուար էր մեզի համար, որպէս փոքրիկ աղջիկներ, լսել այդ դաժան պատմութիւնները, որ հայրս ապրած էր նաեւ որբանոցին մէջ: Ամէն իսկամ ջարդարար չէ, ինչպէս Շերիֆ Հուսէյն եւ իր նմանները, որոնք նոյնիսկ հրահանգ արձակած էին փրկելու համար հայ ժողովուրդը:

Երեսփոխանուհին իր երախտագիտական խօսքը յայտնեց նաեւ Նորին Վսեմութիւն Ռաֆայել-Պետրոս Միմասեան Պատրիարքին, իր օրհնութիւնը շնորհած ըլլալուն: Հոգեւոր Տէր, որ իր գաղութի զաւակներուն մէջ խտրութիւն չի դնէր եւ որուն հոգեւոր առաջնորդութիւնը կը շարունակէ ոգեկոչել հաւատք, միասնութիւն եւ յոյս լիբանանահայ կեանքէն ներս:


Հայկական տուտուկի մեղմ ու սրտայոյզ մեղեդիներուն ներքոյ, ներկաները կամաց-կամաց հեռացան Այնթուրայի ոգեկոչման վայրէն՝ իրենց հոգիներուն մէջ անուր պահելով խաչքարին խորախորհուրդ խորհուրդը եւ Կիլիկեան խորհրդանիշներու անջնջելի դրոշմը: Անոնք հեռացան լուռ, բայց ներքին ուխտով մը՝ հայ որբուկներուն շիրմաքարերուն առաջ տուած իրենց խոստումը սրտին մէջ պահելով՝ առյաւել փայփայել անոնց յիշատակը, եւ մշտապէս խունկի բոյրով ու աղօթքի շշուկով բարձրացնել իրենց ձայնը դէպի երկինք՝ ի մխիթարութիւն անոնց տառապեալ ու անմոռանալի հոգիներուն:

Պէյրութ

ՃԱՆՉՆԱԼՔ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ՆՈՐՈՒԳ ՆԱԵԳՈՒՑԵԱԿ ՊԵՐՈՂ ԳԱԼԱՅՈՒՆ

Ապրիլ 10-ին, Մոնաքոյի Սեն Շարլ կաթողիկե եկեղեցույ կամարներում տակ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցույ ժեղով կատարուեցաւ յուղարկարութեան կարգը ողբացեալ Պերճ-Պօղոս Գալայճեանի: Արարողութեան կը մասնակցէին Նորվան Արքեպիսկոպոս Չաքարեան, Խաչատուր Քահանայ Պօղոսեան եւ հանրաժանօք երաժշտագէտ Խաչիկ Երվանդեան, իր երգեցիկ խումբով:



Խօսուած դամբանականներուն մէջ, մասնաւորապէս վեր առնուեցաւ, պարուն Պերճ Գալայճեան անձին՝ բարեգործ ոգին:

Յատկանշական եղած է այս անձին բարեգործութիւն կատարելու եղանակը: Այն սակաւաթիւ արուեստագէտներուն պէս, որոնք իրենց երջանկութիւնը կը ձգտէին գտնել առաւելաբար, բարձր թիւիչով կատարուող ստեղծագործական երկունքի մէջ, քան թէ կը փայտալէին անունի մը համբար: Այսպիսիները, անունի փառքէն աւելի, կը վայելէին արարումի երջանկութեան, գողտրիկ, անբացատրելի քաղցրութիւնը:

Յիշուեցաւ նաեւ իր գաւկիմ Վաչէի արտասանած սրտի խօսքին մէջ, ողբացեալի կատարած՝ դրամական, մեծագումար նուիրատութեան մասին, Երեւանի Ամերիկեան Համալսարանի ուսանողներու օգտին, առանց թմբկահարումի: Մարդիկ եթէ իմացան այդ մասին, որովհետեւ նուիրատացող հաստատութիւնը տեղեկագրելու պարտաւորութեան տակ կը գտնուէր: Նոյնը եղաւ Գերմանիոյ մէջ գործող Վախէ Թաշճեանի «Յուշամատեն կայքէջ»-ի պարագային, որու գլխաւոր հովանաւորողն է ողբացեալը: Անյարիր իր բնատրութեան պարուն Պերճը, բնաւ այս յայտարարութիւններով հպարտացած չէ: Վայելած է պարգապէս նուիր մատուցելու ուրախութեան գողտրիկ քաղցրութիւնը:

Վաչէ Գալայճեան իր խօսքին մէջ ներկայացուց իր կենսագրականը, անդրադարձաւ մասնաւորապէս անոր կատարած ուսումներուն, ընտրած ասպարէզի յաջողութիւններու մասին, ընտանեկան հոգատարութիւններուն եւ այլ կենսական բարիքներուն: Մանրամասն նկարագրեց իր հիմնած ընկերութեան յաջողութիւններու մասին, ինչպէս նաեւ գործին յատուկ յառաջընթացի՝ Սէուտական Արաբիոյ Գնեստա քաղաքին մէջ, իրագործուած ճանապարհաշինութիւններու մասին, եւ այլն, վերջապէս իր ընկերութեան բերած աջակցութեան քաղաքի ընդհանուր զարգացման մէջ:

Ստորեւ Նորվան Արք. Չաքարեանի Դամբանականը

Յարգելի սգակիրներ, Արժեքաւոր, պատուական հայրորդի մը, պիտի աւելցնէի, հայ իշխանի մը յուղարկարութեան կարգը կատարուեցաւ, մեր եկեղեցույ հոգեգնալ շարականներով եւ մխիթարական աղօթքներով:

Խոր ցաւի եւ սուգի մէջ են Գալայճեան ընտանիքի անդամները՝ տիկին Սոնիան, Շահէն, Վաչէն, իրենց ընտանեկան պարագաներով: Սուգի մէջ են Ատրինէն, Պարգեւը, վերջապէս Գալայճեան Գույումճեան, Հարթման, Խաչատուրեան, Տաղիեան, Թաշճեան ընտանիքներու անդամները, ազգականական այլ պարագաները, մտերիմ հարազատները, որովհետեւ մեկնեցաւ այս կեանքէն գեղատաղանդուն նահապետը, իշխանը: Իշխան կը լսեն, որովհետեւ « հայ իշխանը » կը պատկերացնէի այնպէս՝ ինչպէս էր իր կերպարը:

Պարուն Պերճ-Պօղոս Գալայճեանի մահուամբ, հայ ժողովուրդի ծոցէն կ'անհետանայ մեծահոգի, բարեսիրտ անձնատրութիւն մը: Թանկագին բարերար մը՝ որուն աջ ձեռքին տուածը, ձախը չէր իմանար: Այսպէս էր պարուն Գալայճեանը: Անաղմուկ, իշխանական, մեծագումար նուիրատութիւններ կը կատարէր, օրինակի համար, Երեւանի Ամերիկեան Համալսարանին, կամ Սփիւռքի մշակութային, մարդասիրական այլ կազմակերպութիւններուն, եւ այս բոլորը՝ առանց բարձրածայնելու, փախուստ տալով ամէն տեսակի մեծապատիւ ցուցանուրէնէ: Իսկ մարդիկ չեն գիտեր տակալին, որքա՞ն կ'օգնէր անհատ կարիքատրներուն, որոնց շարքին, խոստովանիմ որ կը գտնուիմ նաեւ ես: Խնամակալ, հարազատ եղբայր մը եղաւ ան ինձի, կեանքիս ամէնէն դժուար օրերուն: Անկարելի է մոռնալ իր բարիքը: Յաւեւ երախտապարտ եմ իրեն:

Երուսաղէմի հայոց համայնքի պատմութեան մէջ, Շողիկ եւ Պօղոս Գալայճեան ընտանիքը, ճանչցուած է որպէս ազնուական ընտանիք մը: Պերճ-Պօղոսը՝ գաւակ այս ընտանիքի, ծնած է 7 Մարտ 1936-ին, Երուսաղէմի հայկական քաղին մէջ: Իր նախնական կրթութիւնը ստացած է, Հայոց Պատրիարքութեան «Սրբոց Թարգմանչաց» վարժարանի կրօնաբոյր մթնոլորտին տակ: Այս դպրոցի յարկին տակ դարբնուեցաւ պատանութիւնը մեր սիրելի Պերճին, այստեղ արմատաւորուեցաւ իր մէջ ընթանող մարդասիրական, բարոյագիտական, հայ աւանդութեանց եւ սրբութեաններու արժեքներուն: Մեծ դեր ունեցան իր կազմատրման մէջ պատկանելի ուսուցիչները եւ եկեղեցականները, որոնց շուրջին տակ հասակ առաւ հանգուցեալը: Այնուհետեւ ուսումը շարունակեց Ամմանի անգլիական գոլէճին մէջ, որու ընթացքը փայլուն կերպով արարեց իր, բարձրագոյն ուսումը շարունակեց Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ, հետեւելով «Սիվիլ Ինճինըրինկ» ճիւղին, ուր, որպէս մասնագէտ վկայուելէ ետք, նետուեցաւ իր ընտրած ճարտարագիտական ասպարէզին մէջ: Կամք էր աշխատանք, հաւասար է յաջողութեան: Աշխատասէր այս հայրորդին, հայութեան պատիւ բերող, բացառիկ յաջողութիւն կ'արձանագրէ իր ասպարէզին մէջ:

Բախտը կ'ունենայ, հանդիպելու Օրիորդ Սոնիա Գույումճեանին, որու հետ կ'որոշէ ընտանեկան իր բոյնը հիմնել եւ 1963-ին, Հայ Եկեղեցույ լուսեղէն խորանի առաջ, պատկառարարութեան իր ուխտը կը կնքէ, Լիբանանի այն օրերու առաջնորդ յուսահոգի Տաճատ Արքեպիսկոպոս Ռոֆայելեանի ձեռնաքն: Այս միութենէն, պատկանելի կը բախտաւորուին երկու մանչ գաւակով՝ Շահէն եւ Վաչէն:

Տէր եւ տիկին Պերճ եւ Սոնիա Գալայճեանները ճանչնալու բախտը ունեցաւ, Շահէի ամուսնութեան առթիւ: Նախապէս կը ճանչնայի ողբացեալի քոյրը՝ Երանուհի Հարթմանը, իսկ գերդաստանի անդամներուն մեծամասնութիւնը պիտի ճանչնայի, դարձեալ, Շահէի ամուսնութեան օրը:

Հայրութիւնը, ինչպէս մայրութիւնը տարիք չունին: Տան մը օրհնութիւնն են անոնք: Սարսափելի է անոնց բացակայութիւնը: Հմայքոտ էր սիրելի Պերճ Գալայճեանին հայրական գորովը, որուն բացակայութիւնը չի չափուի միայն միութեան բարիքներովը, անիկա համակ քաղցրութիւն էր, բնական հեղինակութիւն մը, բարոյական սկզբունքներու տէր անձ մը:

Ժողովի կամ հաւաքոյթի մը ընթացքին, Պերճին ֆիզիքական ներկայութիւնը բարձր հեղինակութիւն կը պարտադրէր, անկախ իր մտքի տեսակետներէն, մար-

ՆՈՐՎԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱՔԱՐԵԱՆ

Շատ հետաքրքրական էր լսել, ընտանեկան յիշատակներու բաժինը, ուր կը պատմէր իր ընտանեկան աշխարհի հետ կապուած, զբօսանքները, խաղերը, մրցումները, նարտիի ճիւղին մէջ վայելած վարպետի համբարը: Հագի քանի մը ամիսներ առաջ, հանգուցեալը կ'երթայ արտաքին մը տեսնելու, սրտաբանը բնուելէ առաջ դէմքին կը մայի եւ կ'ըսէ «ձեզ կը ճանչնամ», կը յիշէ թէ տարիներ առաջ, Մոնաքոյի մէջ կազմակերպուած նարտիի ախտյանութեան մրցաշարքի մը ընթացքին, կիսաարտի մնացած էին երկուքը, եւ Պերճը յաղթած էր իրեն, իսկ իր վախճանութիւնը:

Վաչէն յուզումով կը յիշէր նաեւ Լոնտոնի մերձակայքի կիրակնօրեայ պտոյտները: Վուիւսպլոտոնի հիւրասիրութիւնները, ընկերներու, ազգականական պարագաներու, վերջապէս գերդաստանի բոլոր անդամներուն հետ ճոխ սեղաններու շուրջ հաւաքոյթները:

Մինչ այդ, գաւակները՝ Շահէն եւ Վաչէն, երբոր կ'աւարտեն համալսարանական ուսումները, որոշում կ'առնէ բնակավայրը փոխելու եւ կը հաստատուի Մոնաքօ, կը փոխէ արհեստը եւ կը գործէ ներդրումային ասպարէզի մէջ: Մոնաքօ հաստատուելէն ետք տեղափոխուելու մասին պիտի չմտածէ այլեւս:

Վաչէն վկայեց նաեւ իր քաղցրութեան մասին: Ըստ երեւոյթի ողբացեալը մանկութեան տեսած է տնտեսական ծանր տառապանք: Որպէս զգայուն մարդ եւ քաջ գիտնալով կարիքատրի տառապանքին զինը, պարտականութիւն համարած է կեանքի յաջողութենէն ետք, բաժին հանել իր շուրջի կարիքատրներուն: Այս կէտին մէջ մեծ դեր ունեցած է նաեւ իր տիկինը՝ տիկին Սոնիան, անտրուանց, միշտ քաջալեր հանդիսացած է ամուսնոյն, մարդասիրական ծրագիրներու գործարարութեան մէջ: Տէր եւ տիկին, օգնութեան փութալու իրենց բարեգործութիւնները, ըլլայ ընտանեկան շրջանակէ ներս, ըլլայ ընկերային, միշտ կատարած են անաղմուկ, խոր լուրսեան մէջ, այնպէս ինչպէս անտարանը կը թելադրէր:

Գալայճեան ընտանիքի բարոյագիտական փիլիսոփայութիւնը հիմնուած է այս մարդու սկզբունքի վրայ: Ողբացեալի ազգականներէն իրաքանչիւրը կը վկայէ թէ ինչպէ՞ս Պերճը իրենց հայրը նկատուած է: Ընտանեկան շրջանակի անմիջական պարագաներու բերնէն լսուած է, որ ան գերդաստանի «պատրիարք» կը համարուէր: Եւ այս բոլոր յարգանքն ու պատիւը, դրամին չափով չէ չափուած, այլ նուիրատուին օգնելու բարի սամարացիական ոգիէն բխող անասկարկ նկարագիրովը:

Ահաւասիկ մարդը, որուն մեծահոգի արժանիքը, արժանի է ճանչցուելու... Աստուած հոգին լուսատրէ: Օրհնեա՛լ ըլլայ յիշատակը:

ղիկ ակնածելով իր պատկանելի ներկայութենէն, ուշադրութիւն կը դարձնէին իրենց արտայայտելիք խօսքերուն: Բնական հեղինակութիւն կոչուածի գաղտնիքն է ասիկա որ բացատրութիւն չունի: Ծնորդք մըն է որ կը տրուի երկնաւորէն:

Հանգուցեալի նկարագրի յատկանիշներէն էին նաեւ, քաղաքավարութիւնը, յարգանքը, սէրը: Այս երեք ստորագիծերը շաղկապուած էին իր մէջ: Սէրը՝ իրեն համար, պայմանաւորուած էր միշտ յարգանքով: Այսպէս վարուեցաւ ամուսնական իր կեանքին ամբողջ 63 տարիներու ընթացքին, ազնուափայլ իր տիկնոջ՝ տիկին Սոնիային հանդէս: Եղաւ պարտաճանաչ ամուսին մը: Միեւնոյն ոգիով վարուեցաւ իր կեանքին մինչեւ վախճանը, գաւակներուն, հարսերուն, թոռնիկներուն հետ:

Մահուրէն դեռ երկու շաբաթ առաջ, համախմբուած էին իր սիրելիները, մտերմիկ շրջանակի մէջ տօնելու համար իր 90 ամեակը, այս առթիւ կը վայելէին բոլորն ալ, իրմէ ճառագայթող անհուն սէրը յարգանքին խառնուած: Ասա՛ր...Այս տարեկանը վերջինը պիտի ըլլար: Այդ օր յարգանքով ու ջերմ սիրով կարծէք հրաժեշտ կ'առնէր իր սիրելիներուն իրաքանչիւրէն, տիկին Սոնիայէն, Շահէնէն, Վաչէնէն, հարսերէն, թոռնիկներէն:

Ընտանեկան, ընկերային այս բաժանումը, մարդկային յարաբերութեան առումով, սուր ցաւ եւ խոր տրտմութիւն կը պատճառէ, որովհետեւ մահացեալը կը մեկնի անվերադարձ, եւ այս անհետացումը այն տպաւորութիւնը կը թողու որ մեկնողը կը դադարի այլեւս գոյութիւն ունենալէ: Միեւնոյն քրիստոնէական մեր հասկացողութեամբ, երկինքը կը վկայէ այն ճշմարտութիւնը, որ մահացեալները չեն մեռնիր: Մարդկային յարաբերութեան մակարդակով, անոնք պարզապէս կը բացակային... Քրիստոնէական մեր հաւատքը մեզի այսպէս կ'ուսուցանէ: Բայց մարդս տկար է, գօրատր է իր մէջ կարօտի զգացումը, դժուար կը հաշտուի իր սիրած անձին ներկայութենէն զրկուած ըլլալու գաղափարին հետ:

Մխիթարութիւնը կը սկսի այն ատեն երբ մարդ սկսի մտածել բաժանումի միւս երեսին վրայ: Ասինքն մարդու բնութեան հոգեղէն եւ միտքեղէն տարրերուն միջեւ պատահող բաժանումին: Մահը կը բաժնէ հոգեղէնէն մասը հոգեղէնէն: Հոգեղէն մասը կը վերադառնայ հողին, ուրկէ առնուած է, իսկ հոգին չի՝ մեռնիր, որովհետեւ եղած է Աստուծոյ կենդանութեան շունչի փչումով, քանի որ անմեռ է կը սաւաննի դէպի օրեվան մը, սեղ մը՝ որ տնօրհնուած է Աստուծոյ կողմէ: Այդ օրեւանին մէջ, հոգեղէն բնութեամբ կը շարունակէ իր գոյութիւնը մինչեւ մեռելներու յարութեան օրը երբ պիտի վերստանայ մարմնականը:

Յարութեան ճշմարտութեան վրայ պատուաստուած մեր հաւատքով, արարողութեան պահուն աղօթեցիքը որ Տէր Աստուած սիրեցեալ մեր Պերճ-Պօղոս Գալայճեանի հոգին ընդունի երկնքի արքայութեան օրեւանի մէջ, մաս եւ բաժին հանելով անոնց հետ որոնք զԱստուած սիրեցին իրենց բոլոր սրտով, անոնց հետ պայծառացնելով եւ արժանի դարձնելով Իր աջակողմեան դասուն:

Սիրելի պարուն Պերճ, պատուական բարերար, թանկագին բարեկամ, Այս աշխարհէն ձեր սիրելիութեան մեկնումի տխուր առիթով, անգամ մը ես կու գամ յայտնելու երախտագիտական խորին զգացումներս, այն բարիքներուն համար որ տարիներով վայելեցի, եւ երբեք զգացել չտուիք ծանրութիւնը դժուար օրերուն:

Մատթոս Աւետարանի 25-րդ. գլխուն, հետեւեալ տողերը առնելով իբրեւ ծաղկեփունջ մը, փոխան ծաղկեպսակի կը նուիրեն զայն ձեր բարերարութեան, յարգանքս ու սէրս արտայայտելու գոհունակութեամբ:

« Եկէ՛ք իմ Հօր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք աշխարհի սկիզբէն ձեզ համար պատրաստուած արքայութիւնը. որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք տուիք, ծարաւ էի, եւ ինձ ջուր տուիք... մերկ էի, եւ ինձ հագուցեցիք, հիւանդ էի, եւ ինձ տեսնելու եկաք, բանտի մէջ էի, եւ ինձ այցի եկաք: ... Դճմարիտ կը լսեն ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներէն մեկուն ըրիք, այդ ինձ համար ըրիք...» (Մատթ. գլ. 25 հմբ. 34):

Թագաւոր յախտենից, մեր ննջեցեալ սիրելի ընդունիր սուրբերուդ հետ, եւ իր մահուամբ սգաւորուող պարագաներուն պարգեւէ Սուրբ Հոգույ մխիթարութիւն եւ քրիստոնէական հաւատքի գորութիւն: Ամեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ Ժողովի ԸՆԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԸՆդՈՒՄ

(Շարունակում Ա. էջին)

դարձնում սրբությունները ոտնակոխ ընելու անամօք՝ հիւանդագին եւ կոպիտ գործելակերպն է որ կը տիրէ:

Առաւել եւս, ժողովուրդը ամէն օր ենթարկուած է արդարադատութեան եւ օրինական կարգ ու սարքի կամայական եւ քմահաճ գործադրութեան զգուշի գործելակերպին:

Սովորական երեւոյթ դարձած է իշխանութեան քմահաճ դրդումով, իրենց անհաճոյ նկատած որեւէ անհատ կամ խումբ «կալանաւորելու» եւ ամիսներով կալանքի տակ պահելու, յետոյ ազատ արձակելու, եւ յետոյ կրկին «կալանաւորելու» անհատաւախօրէն քմահաճ գործելակերպը:

Եկեղեցական բարձրաստիճան հոգեւորականներ, իրենց բացառիկ բարեբարութեամբ՝ յարգում գործարարներ, կամ երիտասարդ համարձակ կարծիք յայտնող քաղաքացիներ, ամէն օր կ'ենթարկուին այս կոպիտ անքաղաքակիրք, անընդունելի վերաբերմունքին:

Նորընտրուող իշխանութիւններէն կը պահանջուի անմիջապէս դադարեցնել այս դիկտատորական հասարակ գործելակերպը, եւ ազատ արձակել բոլոր այս կարգի «կալանաւորները»:

Պահանջ 3: Վերահաստատել Հայ ժողովուրդի հոգեւոր եւ ազգային բոլոր սրբութիւններու նկատմամբ յարգանքը եւ սկնածանքը: Այստեղ պէտք է յատուկ կարեւորութեամբ յիշուին հետեւեալ կարեւորագոյն ստորաբաժանումները:

ա.- Հայաստանեայց Առաքելական Բազմադարեան Եկեղեցոյ նկատմամբ կը պահանջուի վերահաստատել ամբողջական յարգանք: Նորընտրուած իշխանութիւնները պարտին անմիջապէս դադարեցնել ժամանակէ մը ի վեր ներկայ իշխանութեանց՝ Հ.Ա. Եկեղեցոյ հոգեւորականներուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնայ եւ Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետին նկատմամբ որդեգրած անօրէն վերաբերմունքը:

Անընդունելի է իշխանութեանց կողմէ որեւէ կերպով միջամուխ ըլլալ Հ.Ա.Ե. ներքին գործունէութեան: Սահմանադրականօրէն եւ դարձաւոր մեր աւանդութեան ոյժով հաստատուած այս անսակարկելի գործելակերպը պարտի անմիջապէս որդեգրուի նոր իշխանութեանց կողմէ:

բ.- Ոչ մէկ հարազատ Հայ իշխանութիւն կրնայ հրաժարիլ ցեղասպանութեան պահանջատիրութեան պարտականութենէն:

Հայոց Յեղասպանութեան պահանջատիրութիւնը անսակարկելի եւ անփոփոխելի պարտականութիւնն է հայ պետականութիւնը ներկայացնող բոլոր ժամանակի իշխանութեանց համար:

գ.- Յաւիտենական Արարատ լեռը անփոփոխելի եւ անսակարկելի պատմական խորհրդանշան է Հայաստանին եւ Հայ ժողովուրդին: Անոր հայկական աշխարհին հոգեկան պատկանելիութիւնը սակարկութեան առարկայ դարձնելը անօթալի արարք մըն է պարզապէս: Կը պահանջուի Արարատը վերադարձնել իր պատուոյ տեղը ազգային խորհրդանշաններուն, եւ սրտերուն մէջ:

դ.- «Արցախը մերն է» ըսաւ Հայ ժողովուրդը ամբողջ երեսուն տարիներ իր քաղաքական, գրական, դպրոցական եւ բոլոր այլ հարթակներուն վրայ: Անհատաւախ խեղճութեան դրսեւորում է, մեր դարձաւոր պատմութեան մէջ արձանագրուած այս տուեալ իրականութիւնը հարցազնային տակ ղնելը:

Գիտակցելով հանդերձ դժբախտաբար տակաւին ինքնապաշտպանութեան մեր այսօրուան տկարութեան, կարելի չէ վաճառքի հանել պատմական իրականութիւնները: Անձնատուութիւնը երբեք լուծում մը չէ... նորընտիր իշխանութիւններէն կը պահանջուի իրատես ըլլալ սակայն երբեք չդաւաճանել մեր պատմութեան:

Պահանջ 4 եւ վերջինը:

Նորընտիր իշխանութիւններէն մեր վերջին պահանջը որ նաեւ միւս բոլորին իրականացման անվիճելի հաւաստիքը կը ներկայացնէ, վերականգնումն է Հայաստանի ինքնապաշտպանութեան ազդու եւ արդիական միջոցներուն, որպէս առաջնահերթութեան մէջ առաջինը:

Նախ շեշտենք թէ Հայաստանը ունի պահանջուած բոլոր միջոցները որպէսզի ինքնապաշտպանութեան իմաստով իր ռազմական կարողութիւնը հասցնէ արդիական բարձրագոյն մակարդակին: Այս մասին քանիցս մանրամասնօրէն գրած ըլլալով աւելորդ կը գտնենք անգամ մը եւս այստեղ ներկայացնել այս իրականութիւնը առարկայական պատճառաբանումով տուեալներով հաստատող փաստարկումը:

Անհրաժշտ է վճռականօրէն կրկնել թէ առանց բարձրագոյն մակարդակով ինքնապաշտպանութիւն ապահովելու, մնացեալ վերելք մեր նշած բոլոր արդար պահանջներու իրականացումը կը մնայ խտելիստական ռոմանթիք երագի մակարդակին վրայ:

Այիեմին համար մեր Հայաստանը, մինչեւ այսօր իր Արեւմտեան Ատրայէճանն է... Իսկ Եւրոմիութեան կամ Թրամփի Ամերիկային համար, մեզ համար քանակագին մեր բազմադարեան հայրենիքը, պարզ անցողակի հետաքրքրութեան նոյնքան ալ դիւրաւ մոռցուելիք մանրամասնութիւն մըն է:

Պիտի եզրակացնենք, յատուկ կերպով յայտարարելով թէ Հայաստանի համապետական ընտրութիւններուն առնչութեամբ մենք յատուկ ի սկզբանէ որեւէ թեկնածուի կամ քաղաքական խմբաւորումի նկատմամբ համակրանքով կամ հակակրանքով չենք ուզեր մօտենալ:

Սակայն անվիճելի իրականութիւնն է թէ Հայ ժողովուրդի անշահախնդիր եւ գերազանցօրէն գիտակից մասին մեծամասնութեան համակրանքը եւ զօրավիգը ուղղուած է այն, եզակի կամ յոգնակի, թեկնածուին կամ խմբաւորումին որ կը խոստանայ իր բոլոր միջոցներով ջանալ ապահովել այս յօդուածով բնորոշուած վերոյիշեալ անսակարկելի պահանջներու իրագործումը:

Ի դէպ, ուշադրութեամբ կը հետեւինք երթալով սաստկացող ներկայ ընտրաբաշտին մէջ դրսեւորուող առարկայական զարգացումներուն: Արդէն իսկ ակընյայտ եւ տպաւորիչ են գլխաւոր խմբաւորումներէն՝ մանաւանդ, Սամուէլ Կարապետեանի գլխաւորած եւ հսկայական հետեւողութիւն ապահոված՝ «Ռոժեղ Հայաստանի» եւ բազմաազգայ մասնակիցներով ծովածաւալ ջահերդ գլխաւորած՝ «Հայաստան Դաշինքի» վայելած ժողովրդականութիւնը: Անոնք նաեւ ակընյայտօրէն ջատագով են մեր վերելք բուսած «պահանջներուն» իրականացման:

Հետեւաբար այս պայմաններու տակ որոշապէս մտաբերել է որ միւս խմբաւորումները եւս, եւ մանաւանդ ՔՊԿ-ական շարժման մէջ եւս, դուրս գան ողջմիտ հայրենասիրութեան հետեւորդներու մեծ խումբեր , եւ բոլորը միացնեն իրենց ոյժերը որպէսզի նորընտիր իշխանութիւնները վայելեն ամբողջ Հայ ժողովուրդին՝ ներառեալ ամբողջ Սփիւռքին զօրավիգը:

Մահ եւ Կեանք

ՍՕՍԻ ԳԱՏԵՄՆ ՆԻԿՏԷԼԵՄՆ

Անսպասելի է Տէր-Զօրի Գորշ ու մոսլլ, ահաւոր, Մարդիկ յոգնած անօթի, Դեռ կը Քալեն վիրաւոր...	Կարօտ իր մօր սուրբ կաթին, Մայրը մորթուած կացնահար:
Եւ Եփրատը յորդափնու Կը մոնչէ արիւնոտ, Ճակատագիրը անխօս Լուռ կ'աղօթէ մահափնու:	Անարդար է, սուկալի, Ուր էր Աստուածը հայոց, ... բայց ծագեցաւ լոյս գալիք, Ստեղծարար կանչ ու գործ:
Ինչ՞ վատ, ինչ՞ անգութ են մարդիկ եւ այսքան նման գազանի Զարդել, մորթել տմարդի, Տղաք, կիներ այս անկամ...:	Եւ մենք շառցանք, բազմացանք Վերածնաւ ճոր սերունդ. Շինեցինք տուն, բացինք հանք. Ու հողն հայոց տուաւ հունտ:
Տես՛, մանուկ մը նորածին Կու լայ, կ'ողբայ միալար,	Աստղակարօտ մեր հոգին Կը գրուցէ երկնի հետ Կառչած հողին կաթոգին Պիտի ապրիք մենք յաւէտ...:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ.

(Շարունակում 7-րդ էջին)

Բացի այդ, ջերմուժի (Նաթ, կազ) ճգնաժամը եւ զինքնու բարձրացումը կ'ազդեն համաշխարհային տնտեսութեան վրայ՝ ստեղծելով նոյնիսկ տնտեսական անկման վտանգ: Շատ երկիրներու մէջ կ'աճի հակաամերիկեան տրամադրութիւնը, ինչ որ կրնայ ապագային բարդացնել Միացեալ Նահանգներու դիւանագիտական յարաբերութիւնները, մասնաւորաբար Չինաստանի եւ Ռուսաստանի նման ուժերու դէմ դաշինքներու կազմութեան հարցին մէջ:

Այս բոլորին զուգահեռ, Միացեալ Նահանգներու վարչակազմի դիւանագիտական վարքագիծը եւս դժգոհութիւններու պատճառ դարձած է, որովհետեւ պատերազմը սկսած է առանց դաշնակիցներու հետ խոր խորհրդակցութեան, իսկ հետագային անոնց վրայ ճնշում գործադրուած է աւելի մեծ ներգրաւում ապահովելու համար:

Արդիւնքը՝ թէեւ Իրանի ռազմական կարողութիւնները զգալիօրէն թուլացած են եւ ղեկավարութիւնը ծանր կորուստներ կրած է, բայց պատերազմը չենք կրնար զնահատել միայն ռազմադաշտային ցուցանիշներով: Իրանի ռազմավարութիւնը հիմնուած է դիմադրելու, հակառակորդին ծախսերը բարձրացնելու եւ հակամարտութիւնը աւելի լայն՝ համաշխարհային մակարդակի տեղափոխելու վրայ:

Այս իմաստով, Թեհրանը մասամբ յաջողած է՝ ստեղծելով իրավիճակ մը, ուր նոյնիսկ Միացեալ Նահանգներու ռազմական յաջողութիւնները կրնան վերածուիլ ռազմավարական բարդութիւններու:

Ո՞Չ ՅԱՂԹՈՂ, Ո՞Չ ՊԱՐՏՈՒԱԾ. ԱՆՈՐՈՇ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԷ

Այսպիսով, ներկայ պատերազմը կը բացայայտէ ոչ միայն ուժերու բախում մը, այլեւ ռազմավարական մտածողութիւններու խոր հակադրութիւն: Միացեալ Նահանգներն ու Իսրայէլը կը փորձեն արագ եւ շօշափելի արդիւնքներ արձանագրել՝ ռազմական գերազանցութեան միջոցով, մինչդեռ Իրանը կը խաղայ աւելի երկարատեւ խաղ մը՝ հիմնուած դիմադրութեան, ժամանակ շահելու եւ հակառակորդին սպառնցնելու վրայ:

Անշուշտ այստեղ չպէտք է մոռնալ, որ պատերազմի ընդհանուր ձեւաչափը այլեւս առաջուանը չէ: Իսլամապատի մէջ տեղի ունեցած են (երկու փուլով) բանակցութիւններ, «Հուրմոզ»ի նեղուցին շուրջ որոշակի «խօսակցութիւններ» եւ դրական շարժեր, տեղի ունեցած է նախագահ Թրամփի դէմ մահափորձ, ու այդ բոլորէն անդին Թրամփի Սպիտակ Տան մէջ ընդունած է Մեծն Բրիտանիոյ Չարլզ Բազաւորը: Թերեւս այս բոլորը թուին մանրամասնութիւններ, բայց նաեւ նախանշաններ են, որ ԱՄՆ մեծ հաշտով պատրաստ չէ երկարատեւ պատերազմի մէջ գտնուիլ:

Այս իրականութեան մէջ «յաղթանակ» հասկացութիւնը կը կորսնցնէ իր դասական իմաստը: Ռազմադաշտին վրայ արձանագրուած յաջողութիւնները չեն երաշխաւորեր ռազմավարական յաղթանակ, ինչպէս նաեւ ծանր կորուստները միշտ չէ, որ կը նշանակեն պարտութիւն: Ամէն կողմ կը փորձէ իր չափանիշներով սահմանել յաղթանակը՝ ստեղծելով բազմաշերտ եւ հակասական պատկեր մը:

Հետեւաբար, այս պատերազմին ճակատագիրը պիտի որոշուի ոչ միայն զենքի ուժով, այլ նաեւ քաղաքական տոկոսներով, տնտեսական դիմացկունութեամբ եւ դիւանագիտական ճկունութեամբ: Իսկ մինչ այդ, աշխարհը կը շարունակէ ապրիլ անորոշութեան մէջ, ուր ամէն նոր զարգացում կրնայ փոխել ուժերու հաւասարակշռութիւնը՝ բաց պահելով այն հարցը, որ կը մնայ դեռ անպատասխան. ո՞վ իրականութեան մէջ պիտի համարէ ինքզինքն այս հակամարտութեան իսկական յաղթողը:

Երեւան

ՄԱՅԻՍ Շաբաթաթերթ

www.baikarweekly.com

ԶԱՀՐԱՏ՝ ԱՊՐԻԼ 24-ԻՆ

ՎԵՀԱՆՈՅՑ ԹԵՔԵԱՆ

Աազանի անունը միայն ինք գիտեր
բոլորին համար Չահրատ էր
Իր հնարամիտին ուրկե եկած ըլլալն ալ
միայն ինք գիտեր, անունը Կիկո էր

Առտու կանուխ քանի մը հեղ գնաց եկաւ
Գնաց եկաւ
Կիկոյին չգտաւ
խանութը բացած՝ ծորակ կը ծախեր
Չահրատն ալ իր կատուն գրկած
Պճտուն ոսկեղէն աչուկներով սեւակ Մայմունին
Գնալը կողմն ատրտոցնէլ սկսաւ

Չահրատը թափանցիկ
Կիկոն գոյնզգոյն էր, կկուի պէս մէկ ոտքը վեր
Պատրանք կը թերթեր նաւամատոյցին վրայ
Երազ կը ծխեր

Կարճիկ էր Կիկոն շարժուն կծիկ էր
Տիտիկ ընէլ չէր գիտեր
մայրամուտ կը շնչէր, քիչ մըն ալ տիկին-միկին կը հառաչէր
ամէն անգամ տարբեր անկիւնէ կ'ելլէր ձայնը
Շրջապատին անհաղորդ կը կարծուէր բայց անանկ չէր
Մարմարայէն խումբ խումբ կաթիլ երբոր ցատկեր իր վրայ
անմեղ-անմեղ կը խնդար
Ըսէ՛ք տեսնե՞մ Կիկոն դժբա՞խտ թէ բախտատու էր
Չահրատէն գաղտնի իր կեանքը ապրիլ կը փորձէր
Չահրատ անոր ամէն ըրած-չըրածը արար աշխարհին
կը յայտներ
Ասանկ բան կ'ըլլա՞յ մի

Պոլտոյ մէջ փողոցներ կան որ Այբուբենի մայր տաճարը կը հասցնեն
Համբիշը ձեռքին
Չահրատ ամէն օր կ'այցելէր այդ եկեղեցին
Խօսելով մրթմրթալով յուզելով
չարածնի ժպիտով՝ բարդ կծիկներ կը քակեր
Քակեց ժամանակը, ծխացող երազները
սիրոյ տանիքները, անկատար կատակները
նոյնիսկ պահուրտած զգացումները

Կիկոն զարմացած ու յարաշարժ
խախտուած ու լայնաժպիտ
աշխարհին ինչ եղածը շատոնց հասկցած էր
Բայց մենք չէինք հասկնար իր ինչ հասկցած ըլլալը
Նստուն սուլել կու տար
ոսպ մաքրող կնկան ափսէն արկածով գետին կը ձգէր
ցրուածի ձեւեր կ'ընէր, սակայն եւ այնպէս
եւ հաստատապէս խորքը տարբեր էր
Ինք սորվեցուց Չահրատին սովորականէն անդին ապրիլ
Չահրատ հայկական կեանքի, մամուլի, հրաւերներու եւ ծրագիր-
ներու մէջ մխրճուած էր
Ուզէր- չուզէր միշտ Կիկոյին անկիւնէն կը դիտէր հարցը

Այս վերջին տարիներուն հայ կեանքին մէջ ինչե՛ր
գլխավայր դարձան
Գացին մեծերը, արդար հոգիները, սրբութեան խնկարկունները
գացին յաղթանակողները
գանձատուն շինողները, տապանակ պահպանողները
Չահրատն ալ գնա՛ց , Կիկոն մնաց
Կիկոն կարճիկ էր, կոկիկ է, բոպիկ էր
այնքան ճարպիկ էր որ յանկարծ
Ապրիլ 24ին Չահրատը ետ եկաւ Կիկոյին ձեռքը ամուր բռնած
Երկուքն ալ ծերացեր էին
Ասանկ բան կըլլա՞յ մի

Նստեցան ծովափը
Յիշեցին հին համայնքին երակն ու երանգները
Կախարդական Պոլիսը
Յիշեցին եղեռնահար գրողները
Վարուժանը, Սիամանթոն, Չոհրապը եւ Կոմիտասը
Թաղերը, դպրոցները, եկեղեցիները
խմբագրատունները
Հայութեան ձայնը
օրուան խնդրանքն ու խայտանքը
աղօթք դարձած գաղութը
Այդ կիկոն դեռ ոսպ կը մաքրէ.
Նոր Պոլիսը հին Պոլիսէն բաժնուա՞ծ է
Պոլսեցիները թող պատասխանեն

Անոնք որ կեանքը կ'ապրին սահմաններէ դուրս՝
ամէն տեղ կը հասնին
Կիկոն Չահրատին գիրկը նստաւ
Մայմունն ալ ինքզինք քաշքշելով եկաւ
մէկը ծխե՛ց
մէկը պարե՛ց
մէկը մրափե՛ց

Չահրատին յիշածը մէ՛կը չյիշեց:

Ապրիլ 24, 2026

ՀԱՅՈՑ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ Վ. ԹԵՔԵԱՆ ՄԻՋՆ. ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

(Ծարունակուած 8-րդ էջէն)

Ան իր խօսքը եզրափակեց ըսելով.« Հպարտ զգանք մեր հայ ըլլալուն հա-
մար, քանի որ յարգուած ենք ոչ միայն բոլոր ժողովուրդներու, այլ նոյնիսկ
Աստուծոյ մարգարէներու՝ Քրիստոսի եւ Մուհամմատի, նաեւ որպէս աշակերտ,
շատ լաւ պիտի սորվիք հայերէն լեզուն, հայոց պատմութիւնը ու պահանջա-
տէր ըլլաք»:



Վարժարանիս տնօրէնուհի՝ Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեան իր
խօսքին մէջ ըսաւ. «Ապրիլ 24-ը սուգի օր չէ, այլ պայքարի: Մենք պետք է շա-
րունակենք պահանջել պատմական ճշմարտութեան ճանաչումը: Այսօր խո-
նարհունով կը յարգենք մեր անմեղ նահատակներուն սուրբ յիշատակը եւ կը
վկայենք, որ հայ ժողովուրդը, հակառակ իր կրած աննկարագրելի տառապանք-
ներուն, մնաց կանգուն: Մեր ինքնութիւնը չկորսուեցաւ եւ մեր ոգին չմարեցաւ»:



Ան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Թող մեր նահատակներուն արեան կան-
չը ապրի մեր մէջ, որպէս յոյսի եւ ուժի աղբիւր եւ մեզի յիշեցնէ, որ յիշողութի-
նը մեր ամենամեծ զենքն է, իսկ միասնութիւնը՝ մեր ամենամեծ յաղթանակը»:

Վերջապէս ան շնորհակալութիւն յայտնեց օրուան հիւր բանախօսին, յայ-
տագրի պատասխանատու ուսուցիչներուն եւ աշակերտներուն, որոնք մաս-
նակցեցան այս յիշատակի ձեռնարկին: Ապա ան յուշանուէրով մը պատուեց
Տիար Պերճ Արապեանը:

Որպէս ցեղասպանութեան ժառանգորդ՝ մեզի համար Ապրիլ 24-ը գեթ
յիշատակման թուական չէ, այլ գոյապայքարի մնայուն կենսածէն:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԼՐԱՏՈՒՄԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ

ՄԵՇ ՀՈՒՔՈՎ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԿ ԶԱՅՆԱՏԱՆԻ ՆՈՐ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՍԸ

(Ծարունակուած Ա. էջէն)

Ի դէպ, արարողութեան չէին հրաւիրուած CCAF-ի համանախագահները,
Ֆրանսահայոց թեմի առաջնորդն ու Ֆրանսայի մէջ Արցախի մնայուն
ներկայացուցիչը:

Հանդիսութեան սկիզբը, դեսպանատան բացման ժապաւէնը միասնաբար
կարեցին Ժան-Նոէլ Պառօն եւ Արարատ Միրզոյեանը, որմէ ետք նախարար
Միրզոյեան շնորհակալութեամբ պարզեց Հայաստանի եռագոյնը: Արար-
ողութեան ընթացքին Ֆրանսայի եւ Հայաստանի փառերգերը նուագուեցան
Ֆրանսայի Ազգային պահակախումբին կողմէ: Որպէս ֆրանքեհայկական
կապերու արմատատրման խորհրդանիշ՝ երկու նախարարները միասնա-
բար ծիրանեմի մը տնկեցին պարտէզին մէջ:

Ելոյթներով հանդէս եկան Ժան-Նոէլ Պառօն, Արարատ Միրզոյեանը եւ
Ֆրանսայի մէջ ՀՀ դեսպան Արման Խաչատրեանը: Անոնց ելոյթները կեդ-
րոնացան երկու ժողովուրդներու պատմական բարեկամութեան ու պետա-
կան մակարդակի վրայ հաստատուած ամուր կապերուն շուրջ:

Նշենք, որ դեսպանատան պատմական արժէք ներկայացնող այս նոր
կառոյցը, որ կը գտնուի 9-11 rue Bnouville, 75016 Paris հասցէին, ժամանա-
կին եղած է Ֆրանսայի նախկին նախագահ (1974-1981) Վալերի Ժիսքար
տ'Էսքէնի կեցավայրը: Հայաստանի Հանրապետութիւնը այս առանձնա-
տունը գնած էր 23 միլիոն եւրոյի (որուն մասին 3 Հոկտեմբեր 2024-ին յայ-
տարարած էր վարչապետ Նիկոլ Փաշինեան), իսկ վերանորոգման աշխա-
տանքները սկիզբ առած էին 2025 Դեկտեմբերին:

Այս գնումով Հայաստան վերջապէս Փարիզի մէջ ունեցաւ իր սեփակա-
նութիւնը հանդիսացող նստավայր մը: Յիշեցնենք, որ մինչ այդ՝ 1995-էն ի
վեր, Հայաստանի դեսպանութիւնը կը գործէր պայմանագիրով եւ անվճար
տրամադրուած շէնքի մը մէջ, որ սակայն պետութեան սեփականութիւնը չէր
հանդիսանար:

Բացման հանդիսատար արարողութիւնը եզրափակուեցաւ ճոխ ընդունե-
լութեամբ մը՝ երաժշտական հնչիւններու ներքեւ: